

Նորագիտությունը կտոր պղինձները Հ. Զաքարիա կը գտնէ շատ լաւ վիճակի մէջ պահուած, այնպէս որ կը վկայէ նոյն նամակին մէջ «կարծեմ թէ հարիւր հատ չէ նոքօք տպագրեալ»։ Մեծ ուրախութեամբ պղինձները կը ղրկուին Ս. Ղաղար 1753ի Ապրիլ ամսուն, Հ. Զաքարիայի հետեւեալ յանձնարարութիւններով. «Յորժամ ի ձեռս ձեր հասցի, տալիք տպել եւ առաքել աստ ի վաճառ. բայց ամենեւին առանց չէրչիւէի մի առաքէք, այլ տուք կպուցեալ յաստառ, փօմօլօտիք չէրչիւէս շինել, եւ եղեալ ի նեղ եւ երկայն սնտուկ առաքեսցիք աստ ի ձեռս իմ, կամ ի մերայնոց ձեռան, զի վաճառեսցին։ Զգիտն դիք եօթն կամ ութն ղուռուռ։ Լաւ լինի զի զմինն Հ. Իզնատիոսն ըստ զանազանութեան դաւառաց եւ թաղաւորութեանց որոշեսցէ զանազան գունովք ներկից, եւ այնու օրինակաւ տալիք ներկել զոմանս. եւ զայլ մարդեղէն նկարսն, որ շուրջ զաշխարհացուցիւ, ծաղկարարն նկարեսցէ, նաեւ ոսկի եւ արծաթ ուրեք ուրեք ըստ տեղւոյն դիցէ, զի պայծառ լիցի, եւ այնժամ զգիտն կարէք յաւելուլ, զոր օրինակ տասն ղուռուռ։ Բայց զերիս հաստ ուղարկեսցիք ինձ, զի զմինն տացուք թօմաճանօղլուին, զմինն Սէրգիս աղային եւ զմիւսն Տէր Անտօնին»³։

Ութը կտոր պղինձները, խնամքով փաթթուած Հ. Զաքարիայէ եւ Հ. Վրթանէսէ, կը հասնին Ս. Ղաղար, Հ. Զաքարիայի նամակին հետ, որով ներողութիւն կը խնդրէ Մեղքոնեան Աբբահօրմէ այսքան մեծ գումար ծախսելուն եւ կանխապէս հրաման չխնդրելուն համար. 200 ոսկին բաւական չօշափելի գումար էր նոյն օրերուն, այնպէս որ

ուսելն տայի 200 խոշ. եւ այնպէս թողեալ զնացաք։ Եւ յետ աւուրց ինչ երաց զայս բան Տէր Անտօնն առաջի զօֆճի Սէրգիս աղային, եւ առաջի թոմաճանօղլուին, եւ առաջի Հ. Վրթանիսի, որում պատասխանէ արարեալ նոքա ասացին մի հանէք զգանձն զայդ ի ձեռաց, եւ գնեսցիք գոնեա 220 խոշով. զ200 տացէ Հ. Զաքարիայն եւ գրասնն մեք տամք։ Ես իբրեւ տեսի թէ Հ. Վրթանէսն եւս յօժարի, եւ զի չկայ ժամանակ առ ձեզ դրել եւ ի ձէնջ զպատասխանի առնուլ, մանաւանդ զի եւ այլք խնդրէին խել ի ձեռաց մերոց, հաւատալով եւս թէ նաեւ դուք յօժարիք (յորմէ եւ զթողութիւն հայցեմ վասն առանց հարցանելոյ ի ձէնջ ձեռնամուխ լինելոյս յայսպիսի ծանրագին գործ), ես ետու զ200 խոշ. եւ թոմաճանն 10 խոշ, նոյնպէս եւ Սէրգին աղայն, եւ այսպէս զնեցաք եւ մեր եղեւ»։

3. Հ. Զաքարիա Պոլիսէն, 1 Ապրիլ 1753ին, առ Մեղքոնեան Աբբայ, Վենետիկ։ Նոյն այս նամակին քով, թուղթի կտորի մը վրայ Հ. Զաքարիա կ'աւելցնէ. «ի վեր անդր դրեցի թէ առանց չէրչիւէի մի՛ ուղարկէք, բայց ասէ թոմաճանեան տիրացու Յօհաննէսն, թէ նաեւ առանց չէրչիւէի եւս ուղարկեսցեն, բարուք է։ Ուստի երեսուն կամ քառասուն հատ առանց չէրչիւէի եւս լոկ թղթով ուղարկեսցէք (...) զգիտն այսպիսի լոկ թղթոյս դիրք երեք խոշ եւ կէս, կամ չորս խոշ. վասնզի ազդ մեր աղքատ է, եւ գծուարին տալ միոյ պատկերի վեց եօթն խոշ. այլ յորժամ դիւրագին լինի, բազումք գնեն. զայս փորձիւ դիտեմք եւ տեսանեմք»։

ծերունի Հ. Միքայէլ Սեբաստացին չի վաւերացներ Պոլսոյ մէջ անոնց դործեղակերպը, ու իր դժգոհութիւնը կը հասցնէ Աբբահօր⁴։

Մեղքոնեան Աբբահայր, թէեւ ներքսապէս ուրախ է ազգային արժէք մը փրկուած ըլլալուն համար, սակայն իր հարազատ զգացումը չէր կրնար յայտնել Հ. Միքայէլի, որ այնքան նուիրումով կ'աշխատէր յօգուտ Միաբանութեան. «գնումն պղինձեայ տախտակաց եւ ինձ ոչ բարուք թուեցաւ, զի պարտ էր նախ հարցանել զորով մեզ, որպէս դու բարուք ասացեալ ես նմա. սակայն դու լռեալ, մինչեւ ես առից ի նոցանէ եւս գիր»⁵։ Նոյն շնչով չէ որ կը պատասխանէ Մեղքոնեան Հ. Զաքարիայի. «յաղագս պղինձեայ աշխարհացուցին, ծանիր, զի դրեալ է եթէ Արդարն յառաջագոյն ամբաստան լինի զամօնէ, զոր ի քո անձն տեսի կատարեալ. վասն որոյ ուրախ եմ. քանզի թէ միւսն ի քո անձն տեսի պատահեսցի՝ ոչ առնես մինչեւ ոչ հարցանիցես։ անգամ այսպիսի պատահեսցի՝ ոչ առնես մինչեւ ոչ հարցանիցես։ Իսկ զտպելն եւ զկպուցանելն, արասցուք որպէս գրեալ ես, յորժամ դայցեն պղինձքն այսր. ընդ նմին գրեսցուք թուղթ շնորհակալութեան եւ առ Տէր Անտօնն»⁶։

Շուրջ տարի մը ետք, այն փ 1754ի Ապրիլին, պատրաստ են Պոլիս ղրկուելիք քարտէսները։ Այս ուղղութեամբ կը գտնենք մանրամասնութիւններ վանքիս պաշտօնական հաշուեգիրքին մէջ, ուր արձանագրուած են հետեւեալները.

«1754 Յունուար.	ետու վասն հայերէն մեծ աշխարհացուցի տպողջէք և մաքրողջէք պղինձին	152 լիրէ.
	ետու վասն նորոգելոյ պղինձնն նոյն աշխարհացուցին	88 լիրէ.
Մարտ.	ետու վասն չէրչիւէից աշխարհացուցին	48 լիրէ.
	ետու դարձեալ վասն չէրչիւէից աշխարհացուցից	65 լիրէ.
	ետու վասն գնդից աշխարհացուցից եւ սնտկին	20 լիրէ»։

Այս բոլորէն կ'եզրակացնենք թէ քարտէսին պղինձները ենթարկուած են նորոգութեան մը, եւ թէ տպագրութիւնը կատարուած է Վենետիկի տպարաններէն մէկուն մէջ. պատրաստուած է անոնց

4. Մեզի կը պակսի Հ. Միքայէլի նամակը. Աբբահօր գրած պատասխանէն կը կուսնենք որ Հ. Միքայէլ պէտք է առնէին թուղթի վրայ գրած ըլլայ այս նիւթի մասին՝ ու գրած իր 13 Մարտ 1753 թուակիր նամակին մէջ։

5. Մեղքոնեան Աբբայ՝ Վենետիկէն, Մայիս 1753ին, առ Հ. Միքայէլ, Պոլիս։
6. Մեղքոնեան Աբբայ՝ Վենետիկէն, 9 Յունիս 1753ին, առ Հ. Զաքարիա, Պոլիս։

համար յատուկ շրջանակ, չորս ծայրերը ունենալով չորս գունտեր, ինչ որ յանձնարարած էին Պոլիսէն:

Հ. Ջաքարիա ապսպրած էր ւերեսուն քարտէս. սակայն այս առաջին անգամին՝ պատասխանատու պաշտօնեան Հ. Ներսէս Համբարեան Վենետիկէն կը ղրկէ միայն ինը օրինակ, որոնցմէ առաջին երեքը պիտի բաժնուէին երեք բարերարներուն, իսկ մնացած վեցը ծախու, իւրաքանչիւրը վեց ղուռուշի: «Ձմինն ի յաշխարհացոցից նոյնժամայն զնեաց հաճի խաչատուրն, որդին Սեդրոսին, կը գրէ Պոլիսէն Հ. Ջաքարիա, միւսքն ւես Սատուծով շուտով վաճառին. դուք հնգետասան կամ քսան եւս ուղարկեցէք»⁷, ու դարձեալ կը յանձնարարէ որ ներկուած ըլլան, խառն ոսկի ու արծաթ գոյներով, եւ այս գործին պատասխանատուութիւնը կը յանձնէ Հ. Յակոբոս Չամչեանի, որ ճարտար ձեռք ունէր:

Սակայն Հ. Ջաքարիայի ահնկալածին չափ ալ ժողովուրդը չի խանդավառուիր քարտէսով. ծերունի Հ. Միքայէլն է որ Պոլսոյ մէջ կը զբաղի գիրքերու վաճառումով. սա իր 15 Սեպտ. (1754) թուակիր նամակով կ'իմացնէ Աբբաճօր թէ «վաճառեցաւ մինչեւ ցարդ եւ երկու աշխարհացոյց», որոնցմէ մէկը գնած էր վերոյիշեալ խաչատուրը եւ երկրորդը ուրիշ ազգային մը. այնպէս որ Հ. Ջաքարիա, հակառակ որ տասնհինգ հատ ապսպրած էր, կը ստիպուի փոխել թիւը ու ըսել մեզի նաեւ պատճառը չծախուելուն. «վասն աշխարհացոցիցն, զորոց գրեցի թէ առաքեցէք 15 ներկյալս, հիմնին բաւական է առ այժմս, աւելի մի՛ առաքէք, զի ոչ քշուին այնչափ այժմ վասն դառնութեան ժողովրդոց, որք ի շինուածս ի հրայրեցեաց պատաղին»⁸:


Տարի մը ետք, այն է 1755ի Ապրիլին, Հ. Միքայէլ Պոլիսէն կ'իմացնէ թէ սպառած են քարտէսները, իսկ Հ. Իզնատիոս խաչատուրեան խանդավառութեամբ կ'ապսպրէ «զմեծ աշխարհացոյց շինեալ որպէս զառաջինն, որչափ եւ լիմիցիմ»⁹, եւ երբ կ'ուշանան, Օդոստոսին դարձեալ կը կրկնէ խնդրանքը, «զի եւ ոչ մի դոյ աստ ի նոցանէ եւ խնդրողք բազում ւեն»¹⁰: Չունինք ճշգրիտ թիւը ղրկուած քարտէսներուն. միայն պարագայական հաշուեցոյցներ ունինք մեր տրամադրութեան, ուր կը տեսնուի թէ զանազան անգամներ գիրքերու սնտուկներու հետ կը ղրկուին նաեւ քարտէսներով լեցուն երկարածեւ սնտուկներ. այսպէս 20 նոյեմբ. 1755ին Վենետիկէն Հ. Թադէոս Ասկէրեան կը գրէ Հ. Ջաքարիայի. «ի թիւ 2 սնտուկն են վե-


7. Հ. Ջաքարիա՝ Պոլիսէն, 15 Յուլիս 1754ին, առ Մելքոնեան Աբբայ, Վենետիկ:

8. Հ. Ջաքարիա՝ Պոլիսէն, 30 Հոկտ. 1754ին, առ Մելքոնեան Աբբայ, Վենետիկ:

9. Հ. Իզնատիոս՝ Պոլիսէն, 15 Մայիս 1754ին, առ Մելքոնեան Աբբայ, Վենետիկ:

10. Հ. Իզնատիոս՝ Պոլիսէն, 18 Օգոստ. 1754ին, առ Մելքոնեան Աբբայ, Վենետիկ:





1979

մ քն ա-

Էրեբ

րոյ ասացեալ 11 մեծ աշխարհացոյց կազմեալք, եւ 44 ոսկէզօծ թօփուղք նոցին», ինչ որ նշան է թէ կը ղրկուէին զարդարուած եւ դունաւորուած, որոնց իւրաքանչիւրին գինն է միշտ վեց ղուռուշ: Նոյն այս քարտէսներուն համար է որ վանքի հաշուագիրքին մէջ նշանակուած է. «1755 Սեպտ. Վասն աշխարհացոյցի չէրչիւէին ետու 80 լիւրէ»:

Յաջորդ տարիներուն պարբերաբար կը ծախուէին քանի մը օրինակներ. այսպէս.

1. 1767 Հոկտ. 13ին, Արուսթին Տի Զօպան կը գրէ Ֆիլիմէնկէն առ Հ. Վրթանէս Ասկէրեան (Վենետիկ), խնդրելով գանազան գիրքեր, որոնց հետ «եւս մէկ հայեւար համատարած աշխարհ(հ)ացոյց». ինչ որ ստացած է եւ 4 Մարտ 1768ին կը գրէ շնորհակալութեան նամակը:

2. 1768 Մայիս 5ին Ս. Ղազարէն Պոլիս ղրկուած գիրքերու ցանկին մէջ կը կարդանք. «10 Աշխարհացոյց մեծ չէրչիւէյով. հատն 6 ղուռուշ. բնաւն 60 ղուռուշ»:

3. 1770ին երբ Հ. Սուքիաս Աղամալեան կը հասնի Մատրաս, կը տեսնէ աղգայիններու ծարաւը՝ որ ունին գիրքի հանդէպ. իր զանազան նամակներուն մէջ, ուղղուած Մելքոնեան Աբբաճօր, կը կատարէ բաղմաթիւ գիրքերու ապաւրանք, յատկապէս պատմական ու աշխարհագրական, որոնց մէջ միշտ կը յիշէ Համատարած աշխարհացոյցը: Տարիներ ետք, այն է 1778ին, երբ Հ. Պետրոս Հազարմալեան կ'անցնի Նոյն քաղաքէն, իր կարգին կը կատարէ նոր ապաւրանքներ, կը յիշէ «եւ մեծ աշխարհացոյց մի եւս, չորի չկը պուցած, աստէն խնդրօղն որպէս կամի շինէ»¹¹:

4. 1773ին Հռոմ Փրոփականտայի քարտուղարը կը հետաքրքրուի հայկական քարտէսներով. եւ որովհետեւ ծանօթ էր նա Անթէպցի Հ. Գէորգի (Հռոմ), անոր կը յայտնէ իր փափաքը, որ իր կարգին Յուլիս 7ին կը գրէ Մելքոնեան Աբբաճօր. «Յայտ առնեմ Գերյարգութեանդ, զի Մօնսինեօռ սկըրթարն լուաւ թէ ի վասն մեր գոն ոմանք աշխարհացոյցք արարեալք հայոց դրով. ուրեմն պարտաւորեաց զիս դրել առ հայրութիւնդ, որպէսզի շնորհք արասցես առաքեսցես մի մի յիւրաքանչիւրոցն վասն Փրօփականտային, ի յիշատակ, ի պարծանս ձեր առ հայոց. քանզի բերել ետ ի Ստամպուլու նաեւ տաճկերէն աշխարհացոյց մի: Խնդրեմ մի՛ զանց արասցես, քանզի յոյժ հաւէսլի է արեւելցոց բանից եւ գործոց, եւ կամի յա-

11. Հ. Պետրոս՝ Պասրայէն, Փետր. 1778ին, առ Մելքոնեան Աբբայ, Վենետիկ:

և ուրս իւր զարդարել զգօլէճն այսպիսեօք եւ նմանիւք. մանաւանդ շնորհք մեծ առնէճ քմի օրինակ աստուածաշունչ պատկերաց եւս, որ իցէ հայոց գրով, եւ համառաքած աշխարհացոյցն»։ Խնդրոյ առարկայ քարտէսները ղրկուած են Հռոմ, ու Հ. Գէորգ անձամբ ներկայացուցած է քարտուղարին, որ «եհարց զբիւնսն վասն վճարելոյ. իսկ ես իսկոյն ասացի թէ պարգեւք են առաքեալք մեծութեանդ ի Հայր Աբբայէն. ուստի նա շնորհակալ եղեւ»¹²։

5. 1780 Սեպտ. 2ին Հ. Զաքարիա Պոլիսէն կ'ապարէ «10 Համատարած աշխարհացոյց Մսրտամայ, ծաղկելի չէր չիսէովք, եւ ոսկէզօծ թօփուկներովք»։

6. 1782ին Թրանսիլանիայի Վարատին քաղաքէն Պաղտասար Գըլըճօղլու անունով թօխաթեցի աղբային մը, մերս Հ. Սիմոն Հայրապետեանի միջոցով կը դիմէ Ս. Ղազար, ստանալու համար քարտէսէն օրինակ մը։ Հ. Սիմոն Վարատինէն կը գրէ Վենետիկ 10 Ապրիլին, առ Հ. Կարապետ Մարտիրոսեան։ Հաւանաբար քարտէսը ղրկուած է։

Այսպէս, ահա, ընդհատ ընդհատ ցրուած են Ամսդերտամի Համատարած քարտէսի օրինակները, որոնց մասին այսքան կը ցանց հաւաքել։ ԺԹ. դարուն երբ Ս. Ղազարի մէջ կը պատրաստուին այլ քարտէսներ, աւելի չքեղ եւ աւելի կատարեալ, կարծէք, դարուն մտայնութեամբ այլեւս իմաստ չունէր հետամուտ ըլլալ Ամսդերտամի օրինակին, որու հետեւանքով մոռացութեան ալ մատնուած է. ներկայ դարս է որ սկսաւ գնահատել հինը, մանաւանդ երբ հոն ծածկուած է անցեալի վառ մշակոյթի մը պատմութիւնը։

Այս քարտէսէն Ս. Ղազարի մէջ կը պահուի երեք օրինակ, երկուքը լաթի վրայ, իսկ երրորդը տպագրուած՝ ութը պղինձներուն համաձայն, ութը մեծամեծ մաքուր խաւքարտեալ թուղթերու վրայ, որոնց միութեանէն կը ձեւանայ մէկ լրիւ եւ մաքուր օրինակ։

ԵՐԿԻՐ ԱԻԵՏԵԱՑ (տպ. Վենետիկ, 1746)

ՀԱՄԱՍԱՐԱԾ ԱՇԽԱՐՀԱՑՈՑՑ (տպ. Վենետիկ, 1747)

Տպագրութեան գիւտը սկսելէն ի վեր, գիրքերու հրատարակիչները մտահոգութիւնն ունեցած են ձգիչ դարձնել գիրքը, զարդարելով նկարներով։ Եւ փրպէս ԺԷ-ԺԸ. դարու բոլոր հրատարակութիւնները, որոնք ընդհանրապէս հոգեւոր գիրքեր են, միշտ ունին գոնէ մէկ սրբազան նկար եւ կամ ասելի։ Այս մտահոգութիւնը կ'ը

12. Հ. Գէորգ՝ Հռոմէն, 20 Նոյեմբ. 1773ին, առ Մեկքոնեան Արքայ, Վենետիկ։

տեսնենք նաեւ Մխիթար Աբբահօր մէջ, որու հրատարակչական գործունէութեան մասին այլուր անդրադարձած ենք աւելի ընդարձակ¹³։

Մխիթար Աբբահայր 1733-1736 տարիներու ընթացքին կատարած է Աստուածաշունչի հրատարակութիւնը, ու ճոխացուցած է դայն 156 պղնձատիպ պատկերներով, որոնց համար ծախսած է 3432 լիբէ. դամար մը որ հակայական կ'երեւի՝ եթէ մտածելու ըլլանք որ 1500 օրինակ Աւետարանի քոլոր տպագրական ծախսերը արժած էին միայն 1835 լիբէ։

Այս իրողութիւնը պատճառ եղած է որ Մխիթար աչքերը դարձնէ իր ձեռնասուն աշակերտներուն վրայ, որ անոնք սորվէին փորագրութեան արուեստը ու խնայողէին աւելորդ ծախսեր։ Իրապէս ալ վանքի Մանր Ժամանակադրութեան մը համաձայն, 1745ի Դեկտեմբեր ամսուն «Հ. Իգնատիոսն եւ Հ. Զաքարիայն տեղեկացան փորագրութեան պղնձոյ յումմմնէ պատկերափորէ, եւ փորեցին նախ զծաղիկն ցանկի դրոց Աստուածաշունչ մատենի եւ ապա զայլ քաղով պատկերս»։

Յաջորդաբար կը տեսնենք որ Մխիթար կատարած է զանազան դնոմներ երկու վարդապետներուն համար, որպէսզի անոնք կարենային աշխատիլ։ Այսպէս վանքի հաշուեղիբին համաձայն.

«1745 Նոյեմբ.	Երկու կտոր պղնձոյ, սակս պատկերաց (ետու)	16 լիբէ.
1746 Օգոստ.	Վասն պղնձոյ պատկերին Հրէաստանի	30 լիբէ.
1747 Ապրիլ.	Հ. Իգնատիոսին վասն պղնձին և վասն սկոլին	4 լիբէ.
	Վասն զրգի աշխարհացուցի	4.10 լիբէ.
Օգոստ.	Վասն երկաթեղինաց պատկերի երկնից	4 լիբէ»։

Այս բոլոր ակնարկները կու գան հատուտել ուրիշ Մանր Ժամանակադրութեան մը արձանագրութիւնը, որ կ'ըսէ թէ 1745ի Դեկտեմբեր ամսուն Հ. Իգնատիոս եւ Հ. Զաքարիա սկսան փորագրել պղինձի վրայ զանազան ծաղիկներ, ու կ'աւելցնէ. «նապա ձեռն արկին փորագրութեան այլ եւ այլ աշխարհացուցի»։

Վանքի պատմութեան մէջ կարծէք նոր էջ մը կը բացուէր, այնպէս որ այս շարժումը իր արձագանգը թողած է Մայր Ժամանակագրութեան մէջ, ինչ որ նշան է թէ գործին վրայ կը հակէր Մխի-

13. Հմտ. ՃԵՄՃԵՄԵԱՆ Հ. Ս., Մխիթար Աբբահօր հրատարակչական առաքելութեան գոհարները, Բաղմ. 1977, Հտ. ՃԼԵ. ԹԻԼ 1-2, էջ 53-54, 60, 93-95. Նոյնը առանձին հատորով, Վենետիկ, 1980, էջ 78, 90, 118-119։

Թար անձամբ եւ ուղած է որ եղելութիւնը արձանագրուի վանքի պաշտօնական տոմարին մէջ, ուր կը կարդանք 1745 տարւոյն դէպքերու կարգին. «Ձայնու ժամանակօք Հ. Իզնատիոսն եւ Հ. Ջաքարիայն տեղեկացեալ քանդակադործութեան պղնձոյ ի ճարտարէ միոյ բարեկամէ, քանդակեցին զծաղկադիր ցանկի գրոցն Աստուածաշունչ մատենի, այլ եւ զպատկեր բովանդակ ցուցակ աշխարհին Հայաստանեայց, ի պղնձի տախտակ քանդակեաց Հ. Իզնատիոսն: Իսկ Հ. Ջաքարիայն ղխորհրդաւոր ձեւոց յօրինակ քրիստոնէական հաւատոյ ի բացատրութիւն յօրինելոց զպատկերսն քանդակեաց: Իսկ եւ զերկնային կամարաց, զլուսաւորաց եւ զտարերացն շրջանակաց պատկերս ի պղնձի տախտակս զեղեցիկ քանդակեաց»¹⁴:

Այս վկայութեան մէջ բացայայտ կերպով չեն յիշատակուիր Երկիր Աւետեաց եւ Համատարած աշխարհացոյց քարտէսները, այլ միայն «զպատկեր բովանդակ ցուցակ աշխարհին Հայաստանեայց», որ 1751ին երեւան պիտի փրկէ: Սակայն նկատած որ այս տարիներուն է որ կը խօսուի դանադան քարտէսներու փորագրութեան մասին, մենք կ'ուզենք եզրակացնել՝ թէ ասոնք ըլլան Մխիթար Աբբազօր հրատարակած Հայկազեան բազմաթիւ մէջ գեոգրականները, որոնք թիւով չորս են:

1. «Երկիր Աւետեաց», որու վրայ կը կարդանք «փորագրեալ յամի Տեառն 1746», այսինքն Մխիթար Աբբազօր կենդանութեան, եւ որ երեւան կ'եղէ միայն 1769ին, Հայկազեան բառարանի Երկրորդ հատորին հետ, գեոգրական առ չէջերուն միջեւ¹⁵: Բացայայտ կերպով չէ յիշատակուած թէ ո՛վ եղած է բուն փորագրողը այս քարտէսին, սակայն այն տպաւորութիւնը կը թողու որ Հ. Իզնատիոս խաչատուրեանն ըլլայ եւ ոչ թէ Հ. Ջաքարիայն Ալեքսանեան. ասոր իբր ասացոյց Մայր ժամանակագրութեան նշումը՝ թէ Հայաստանի աշխարհագրութեան քարտէսը «ի պղնձի տախտակ քանդակեաց Հ.

Իզնատիոսն», ինչ որ կը նշանակէ թէ արդէն իսկ վարժութիւն մը ստացած էր փորագրելով Երկիր Աւետեաց քարտէսը:

2. «Համատարած Աշխարհացոյց», որ գեոգրական է Հայկազեան բառարանի Ա. հատորին (տպ. 1744–1749) 258–259 էջերուն միջեւ, Երկիր բառին (էջ 258) իբր լուսաբանութիւն: Բացայայտ վկայութիւն չունինք ո՛չ փորագրողին եւ ոչ թուականին մասին, սակայն Մխիթար Աբբազօր Հաշուեգիրքին մէկ արձանագրութենէն՝ «1747 Ապրիլ. Հ. Իզնատիոսին, վասն պղնձի եւ վասն ակոխի (ետու) 4 լիրէ. վասն գրգի աշխարհացոյցի (ետու) 4·10 լիրէ», կրնանք եզրակացնել որ այս քարտէսն ալ փորագրողը փղած ըլլայ Հ. Իզնատիոս, 1747 տարւոյն ընթացքին:

3–4. Չորդ քարտէսներ, որոնցմէ առաջինը չունի իր վրայ տխուր. կը ներկայացնէ մոլորակներու ընթացքը, գեոգրական՝ Հայկազեանի Ա. հատորի 256–257 էջերուն միջեւ. Երկիր բառին տակ ալ (էջ 257) կը տրուի անոր բացատրութիւնը: Երկրորդը, «Աստղաից երկիմֆ» վերտառութեամբ, գեոգրական է Ա. հատորի 500–501 էջերուն միջեւ, եւ Համաստեղութիւն բառին ներքեւ (էջ 499) կը տրուի քարտէսի բացատրութիւնը: Այս չորդ քարտէսները անտարակոյս Հ. Ջաքարիայն փորագրած է, 1745–1746 տարիներու ընթացքին, որու իբր վկայութիւն ունինք վերեւ յիշատակուած Մայր ժամանակագրութեան 1745 տարւոյն արձանագրութիւնը, ուր յատուկ կերպով կը նշուի այս եղելութիւնը. «Իսկ Հ. Ջաքարիայն... գերկնային կամարաց եւ զտարերացն շրջանակաց պատկերս ի պղնձի տախտակս զեղեցիկ քանդակեաց»:

Այս ծանօթութիւններէն տեսնուի չունինք այլ մանրամասնութիւններ այս չորս քարտէսներու մասին:

ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԸՍՏ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ
ԱՇԽԱՐՀԱԳՐԱՑ (տպ. Վեմետիկ, 1751)

Հայաստանի առաջին քարտէսն է ասիկա, որ իր պարզութեան մէջ հմայիչ է: Ձայն փորագրողի մասին՝ գիւտական թուղթերու մէջ անհամաձայնութիւն մը կը տեսնենք: Վանքի Մայր ժամանակագրութիւնը 1745 տարւոյն արձանագրութեան մէջ բացայայտ կերպով կը շեշտէ գրելով. «զպատկեր բովանդակ ցուցակ աշխարհին Հայաստանեայց ի պղնձի տախտակ քանդակեաց Հ. Իզնատիոսն», ու այս աւանդութիւնը շարունակուած է մինչեւ մեր օրերը կատարուած հրատարակութիւններուն մէջ¹⁶, մինչ այնպէս կը թուի թէ Հ. Իզ-

16. Հմտ. Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ. 1512–1800, Երեւան 1963, էջ 250:

14. Հ. ՄԱՏԹԵՈՍ ՎՐԴ. ԵՒԴՈՒԿԻԱՅԻ, Ժամանակագրութիւն վամացս (ձեռագիր), հտ. Բ., էջ 428:

15. Հայկազեան բառարանի Բ. հատորի (տպ. 1769) Յառաջաբանին մէջ (էջ 10), այս քարտէսին մասին կը կարդանք. «մնայ մեզ ասել յաղագս այս բառարանիս եւ զայս ինչ. զի թէպէտ զանուանս գաւառաց, քաղաքաց, աւանաց, լեռանց, գետոց եւ այլոց նմանաց, որք գտանէին յերկրին Պաղեստինեայ, յայսմ բառարանիս մանրակրկիտ բացատրեցաք, սակայն այսու ամենայնիւ կասկածեալ մեր թէ բազումը չկարէին իմանալ զգիրս նոցա, ըստ արժանեաց ճիշտ մեծ յանձին զգեցաք քանդակել զնոսա ըստ իւրաքանչիւր դրից ի պղնձի, եւ զառ ի նմանէ տպեալ պատկերս հաստատել իւրաքանչիւր ի բառարանի, որով անաշխատ իմաստին եւ նոյն իսկ պարզամիտքն, թէ այս քաղաք կամ այս աւան, կամ այս նիւ գետ՝ յորում կողման երբայական երկրին գետեղեալ կայր կամ արդէն գտանիք»:

նատիրոս միայն հետամուտ եղած է գործին, հսկած է անոր կատարելութեան վրայ, իսկ բուն փորագրողը եղած է վենետիկացի Giuseppe Zucchi:

Քարտէսին ձախակողմեան ստորին անկիւնը քառակուսիի մէջ կայ անուանացոյցը, որ կ'աւարտի սա արձանագրութեամբ. «Յամի Տ(եառ)ն 1751, ի թուին Հայոց ՌՄ»: 1751ի Օգոստոս ամսուն Հ. Իգնատիոս Վենետիկէն կը մեկնի Վիեննա. Թրիեստ հասնելուն, առաջին նամակը որ կը գրէ ամսուն 15ին, ուղղուած Մեքքոնեան Աբբասօր, հարցումներուն մէջ ունի հետեւեալը. «Խնդրեմ, զի ծանուցէ Գերյարգութիւնդ ինձ վասն պղնձոյ աշխարհացոցին Հայաստանեայց, թէ զիարդ եղեւ, արդեօք էա՞ն զբարեւոր կատարումն եւ վըճարեցա՞ն որդւոյ պատկեր փորողին վեց տուգաթն»: Վեց օր ետք դարձեալ կը գրէ. «Խնդրեմ, զի բարեւոր հոգածութիւն եղիցի պղնձի աշխարհացոցին Հայաստանեայց ի պահելն եւ ի տալն սպաղարել, զի սպողն իցէ քաջ հմուտ, եւ թուղթն լաւ եւ յարմար սպաղարութեան, քանզի մեր առաջին սպողն ոչ գիտէ քաջ սպել, այլ պատկեր փորողն գիտէ թէ ո՛ր քաջ սպէ»:

Այս գործ վկայութիւններէն կը հետեւի թէ Հ. Իգնատիոս հսկած է գործին վրայ մինչեւ իր մեկնիլը, եւ չէ տեսած գործին աւարտիլը. վանքի սխալ տեսական պատկեր փորագրողն էր Յրանչեւքոյ Մուքքի. ասոր որդին էր Ճուզեփին, որու պէտք էր վճարուիլ վեց տուգաթն: Թէ ի՞նչ եղած է Հ. Իգնատիոսի դրական դերը այս քարտէսին մէջ, չենք կրնար որոշակի բան մը ըսել. կ'ուզենք միայն ենթադրութիւն մը կատարել, հիմնուած Մայր Ժամանակագրութեան տուեալներուն վրայ, թէ Հայաստանի քարտէսը փորագրողը եղած է Հ. Իգնատիոս, իսկ կատարելագործողը ու վերջին ձեռք մը տուողը Ճ. Մուքքի: Այս վարկածին իբր հեռաւոր վկայութիւն կրնանք բերել վանքիս Հաշուեգիրքին օրըստօրեայ արձանագրութիւնները, ուր նշանակուած է միայն մէկ անգամ. «1751 Դեկտ. Ետու պատկեր փորողին վասն աշխարհացոցին 16 լիրէ», ինչ որ չնչին գումար մըն է: Նկատելի է նաեւ որ քարտէսին վրայ կը պակսի փորագրողին անունը, մինչ Մուքքիները, հայր ու որդի, որոնցմէ մեր տրամագրութեան ունինք հարկւրաւոր փորագրութիւններ, կը սիրեն միշտ նշանակել իրենց անունը: 1754ին Ճ. Մուքքի փորագրած է Ս. Ղազարի մեծադիր պատկերը, ու դրոշմած է իր անունը պատկերին ստորեւ. այս գործին համար տաացած է՝ Հաշուեգիրքին համաձայն՝ շուրջ 500 լիրէ. գումար մը որ չէ կարելի համեմատել Հայաստանի աշխարհացոյցին համար տաացած 16 լիրէին: Արդ այս բոլորէն շատ հաւանական կը թուի՝ թէ 1751ի Հայաստանի քարտէսը փորագրած է

Հ. Իգնատիոս խաչատուրեան, Ճուզեփին Մուքքիի օժանդակութեամբ:

1751ի Նոյեմբեր ամսուն սկիզբը քարտէսին սպաղարութիւնը դեռ չէ կատարուած, որովհետեւ պղինձը կը գտնուի պատկերահանին քով¹⁷, սակայն նոյն ամսուն կէսէն ետք առաջին օրինակները երեւան կ'երևն, որոնցմէ երեք օրինակ իսկոյն կը ղրկուին Վիեննա, Հ. Իգնատիոս խաչատուրեանին¹⁸:

Քարտէսին սպաղարութիւնը հազիւ թէ կ'աւարտի, կը սկսին հասնել Հ. Գէորգ Պաղտասարեանի նամակները, յանձնարարելով որ չձեռնարկեն գործին փորագրութեան. առանց դիտնալու թէ գործը արդէն իսկ աւարտած է: Հ. Գէորգ վանքէն մեկնած էր 1751ի գարնան, դէպի Արեւելք, ու անցնելով Հայաստանի դաւառներէն, անձամբ տուգած էր շատ մը վայրեր ու հասու եղած որ Ս. Ղազարի մէջ փորագրութեան յանձնուելիք քարտէսը, որու մէկ ձեռագիր օրինակը տարած էր իր հետ, չունի պէտք եղած ճշգրտութիւնը. «եթէ կարելի է զՀայաստան երկիրն, որոյ օրինակն առ իս կայ, մի փորէք, վասնզի անհամար է եւ անթիւ տղալն, զի աչօք տեսանեմ զներհակութիւնն, եւ թէ Տէր կամեսցի՝ ես ըստ տեղեկանալոյս եւ ըստ տեսանելոյս զայլ պատկեր մի նկարելոց եմ»¹⁹:

Հայաստանի այս քարտէսը պատրաստուած է անտարակոյս Մխիթար Աբբասօր Հայկազեան բառգիրքին Բ. հատորին համար, եւ դուցէ իբր կտակ մնացած է նոյն ինքն Մխիթարէ, որու մահէն անմիջապէս ետք կը ձեռնարկեն քարտէսին փորագրութեան: Միաբաններու մտադրութեան մէջ նոյն տարիներուն իսկ փութով հրատարակելի էր Հայկազեանի երկրորդ հատորը, սակայն զանազան պատճառներով կ'երկարաձգուի մինչեւ 1769 տարին, ու միայն այն տեսն է որ կ'օգտագործուի 1746ին պատրաստուած երկիր Աւետեաց քարտէսը, ինչպէս նաեւ Հայաստանի այս քարտէսը, որ կարգ մը օրինակներու մէջ կը գտնենք զետեղուած 232-233 էջերուն միջեւ, նախ քան «Բառարան Յատուկ Անուանց, որք գտանին յայլ եւ այլ գիրս արտաքոյ Աստուածաշունչ գրոց» մակագրուած քառիւնը, որու մէջ կը հանդիպինք Հայաստանի տեղանուններուն ալ: 1792ին Հ. Ղուկաս Խնձրճեան Պոլսոյ մէջ տիրացու Յակոբի մը կը ծախէ Հայկազեան բառարանի Բ. հատորը, ուր կը պակսի Հայաստանի քար-

17. «Վասն պղնձեայ աշխարհացոցին, ծանիր, զի եզերեալ է, այլ դեռ առ պատկերահանին վայ եւ դեռ չէ տպեալ փ թղթի» (Մեքքոնեան Աբբայ Վենետիկէն, 6 Նոյեմբ. 1751ին, առ Հ. Իգնատիոս, Վիեննա):

18. «Քեզ առաքեցի... գերիս աշխարհացոյցս Հայաստանեայց նորոգ տպեալ» (Մեքքոնեան Աբբայ Վենետիկէն, 4 Դեկտ. 1751ին, առ Հ. Իգնատիոս, Վիեննա):

19. Հ. Գէորգ՝ Մէրսինէն, 11 Յունիս 1752ին, առ Մեքքոնեան Աբբայ, Վենետիկ:

տէսը. Վենետիկ դառնալուն, իր խոստումին համաձայն, կը ղրկէ քարտէսը տիրացու Յակոբին²⁰:

Քարտէսը Հայկազեանի վերապահուած ըլլալուն համար է որ տպագրութենէն ետք (1751-1769) հրապարակի վրայ չենք դառնել վաճառումի համար: Տպուելէն 12 տարի ետք է որ կը հանդիպինք այս ուղղութեամբ առաջին ակնարկի մը, եւ այն ալ միշտ Հ. Ժոնատիոսէ, որ Պոլիսէն կը լինդրէ «զի առաքեսցիք ինձ քանի մի պատկերս աշխարհացոցի Հայաստանեայց եւ Վերսալի Հօր»²¹, որմէ կարելի է կռահել թէ Մխիթար Աբրահամը նկարին հետ պիտի բաժնէր աղբայրիններու: 1770ին Հ. Միքայէլ Չամչեան Պատրիարքին կը գրէ, փափաք յայտնելով ունենալ Երկիր Աւետեաց եւ Հայաստանի քարտէսը, հաւանաբար բարեկամներու տալու համար իբր նուէր²²: Խօսելով Ամսդերտամի Համատարած Աշխարհացոցի մասին՝ տեսանք թէ Հռոմի Փրոփականտայի քարտուղարը փափաք յայտնած էր ունենալ հայկական քարտէսներ. այդ առիթով իրեն կը ղրկուին նաեւ մինչեւ այն ատեն լոյս տեսած հայատառ բոլոր քարտէսները:

Այս քանի մը վկայութիւններէն կ'եղբակացնենք՝ թէ Հայաստանի քարտէսը սկզբնաբար ստեղծուին հրապարակ չէ ելած ծախսովու համար. 1790ական թուականներուն զայն կը գտնենք Պոլիս, զրաւաճառ Պուշխիշիի քով, ուսկից փափաքողները կրնային գնել:

ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ (տպ. Վենետիկ, 1778)

Վենետիկ տպագրուած, սակայն Մխիթարեան հրատարակութիւն չէ այս քարտէսը, որ չքեղ է ու մեծղի, եւ կրնայ պարծանքը համարուիլ ԺԸ. դարու բոլոր հայկական քարտէսներուն: Քարտէսին

20. «Առ տիրացու Յակոբին եղի աշխարհացոց մի Հայաստանեայց, եւ գրեցաք ի վերայ թէ գին սորա է 20 փարայ. ես վաճառեալ էի նմա աղբ գրառգիրքն իմ, յորում ոչ գոյր այս աշխարհացոց, ուստի այժմ առաքեցի նմա ըստ խնդրոյ նորա. եթէ ինքն ասացէ թէ ես ի գնելն իմ գրառգիրքն ի Հ. Ղուկասէն, վճարեցի նմա զգին աշխարհացոցիս, յայնժամ ըստ խոհմութեան ձերում արասցիք: Ես այսպէս յիշեմ զի ի վաճառելն իմ գրառգիրքն ասացի նմա թէ աշխարհացոցն պակասի ի սմա, ուստի գնեսցիք զմի ի Պշխիշիէն. եւ այսպէս ք վճարելն նորա՝ զգին գրառգիրքն վճարեաց, եւ ոչ աշխարհացոցին: Ետ աւուրց ինչ ասաց թէ առ Պշխիշիին ոչ գտի, եւ ես յայնժամ խոստացայ զմի առաքել նմա, բայց ոչ ձրի: Չայս իմացեալ արասցիք որպէս եւ գիտէք» (Հ. Ղուկաս Ինճիճեան, Վենետիկէն, 11 Մայիս 1792ին, առ Հ. Յարութիւն, Պոլիս):

21. Հ. Ժոնատիոս՝ Պոլիսէն, 19 Մայիս 1763ին, առ Մելքոնեան Աբրայ, Վենետիկ:

22. «Ի խնդրեալս իմ յաւելիք եւ զրազում փոքրիկ դիւրագին պատկերս վասն աղբայր... եւ գնելիքն Աւետեաց եւ Հայաստանեայց աշխարհացոցս երկու, եւ զերկու պատկերս լուսնոյ» (Հ. Մ. Չամչեան՝ Պատրիարքին, 11 Մայիս 1770ին, առ Մելքոնեան Աբրայ, Վենետիկ):

ստորին կեդրոնը կը գտնուի զարդանկար անուանացոյցը, ճոխացած զանազան դրօշակներով, ռազմական գործիքներով, ուր կը տեսնուին Հայկ՝ իր աղեղով, Արամ՝ որ ձեռքին մէջ ունի Հայաստանի քարտէսը, Մեծն Տիգրան՝ արքունի մականով, ու Տրդատ Թադաւոր:

Քարտէսին կեդրոնական մասը կը զրաւեն Փոքր Ասիան ու Մեծ Հայքը, ուր խիտ առ խիտ նշանակուած են տեղագրական անունները, մինչ ալ տեղերու անունները աւելի ցանցառ են: Հիւսիսային մասը ունի ամբողջ Սեւ ծովը իր շրջակայքով, Կասպից ծովը իր ամբողջութեամբ. հարաւէն գրեթէ ամբողջ Կարմիր ծովն ու Եգիպտոսը, Պարսից ծոցն ու Պարսկաստանը:

Քարտէսին մեկենասը փափ է Աղայ Շամիր, որու անունը գրուած է քարտէսի անուանացոյցին մէջ: Նոյն անունին կը հանդիպինք նաեւ մեր դիւանի նամակներուն մէջ, ուսկից կ'իմանանք թէ ան Հնդկաստանի Մատրաս քաղաքի Երեւելի անձերէն մէկը եղած է, Սուլթանեան մականունով, որու որդին տան մէջ բացած է փոքրիկ տպարան մը, խոշոր ծախսերով փորագրել տուած է հայկական պըղինձէ տառեր, ինչ որ, սակայն, անյաջող ելք ունեցած է: 1770 թուականն ենք. Հ. Սուքիաս Աղամալեան եւ Հ. Պետրոս Հազարմալեան կ'անցնին Մատրասէն ու կը ծանօթանան Շամիրի. սա կը դիմէ երկու Մխիթարեան վարդապետներուն, որպէսզի անոնց միջնորդութեամբ Վենետիկի Ս. Ղազարէն ստանայ երկու էջի համար հայկական կապարէ գիրքը եւ տպագրութեան թուղթեր՝ իր առեւտրական գործին դիւրութեան համար: Հ. Սուքիաս, հակառակ որ իր դիմաց կը դնէ Վենետիկի հասարակապետութեան վճիռը՝ որ կ'արդիւնէր դուրս հանել տպագրական տառեր, սակայն միւս կողմէ բարեխօս կ'ըլլայ՝ գրելով Վենետիկ, որպէսզի Մելքոնեան Աբրահայր բարեհաճէր թոյլատու ըլլալ եւ կատարէր անոր խնդիրը²³:

Շամիրի կրօնական համոզումներու մասին խօսելով Հ. Սուքիաս կը գրէ. «ըստ կրօնից մասին զամենայն իբրեւ ճշմարիտս ընդունի

23. «Սա խնդիր ինչ խնդրէ ի Գերարդութենէդ, այսինքն զի առաքեսցիք սակաւ ինչ տառս կապարեայս ի տպագրութիւն թղթոց ինչ վերաբերելոց տուրեւառութեան իւրեանց՝ զորէն ազգացն Եւրոպիոյ: Որդի սորա փոքր մի հնարագէտ գոյով արարեալ էր գործատուն տպագրութեան ի տան իւրեանց, եւ բազում ծախս արարեալ՝ տուեալ էին փորագրել զտառս մի մի ի վերայ պղնձոյ, ամենեւին անհարթ եւ անհաւասար: Ի խնդրելն նորա զայս, փոքր մի դժուարին ցուցաք զառաջինն՝ զվճիռն Թադաւորութեան Վենետիկոյ պատճառեալ վասն ոչ տանելոյ այլուր զտառս: Սակայն եթէ հնար է, առաքեսցիք ի տառից Աստուածաշնչին որչափ բաւական լինի լցուցանել զերկու երեսս թղթոյ Կտակարանին, հանդերձ ամենայն հանգամանօք, այսինքն կտրոցիւք, կտրիւք եւն., զի եւ ազգն Եւրոպիոյ վասն այսպիսի թղթոց տան բերել տառս յԵւրոպիոյ» (Հ. Սուքիաս՝ Բանգալայէն, 20 Հոկտ. 1770ին, առ Մելքոնեան Աբրայ, Վենետիկ):

եւ ոչ մի ումն հետեւող լինի, ըստ աղանդաւորացի օրինի յորս չաղաղեալն է»²⁴։ Իսկ Հ. Պետրոս աւելի քացայայտ կերպով կ'ըսէ «երեւելին յամենեցունց եւ անուամբն Պրն. Շահմիրն է. սա հակառակն է ուղղափառութեան, եւ ընդ մեզ չունի այնչափ ինչ բարեկամութիւն, մանաւանդ զի խնդրեաց ի մէջ ձեռագիր զի տացի նմա ի մենաստանէն փոքր ինչ տպագրութեան, զի կամի զմուրհակսն վաճառականութեան տպել, զի մի' վաստակեսցին որդիքն նորա դրելով. եւ Հ. Սուքիասն պատասխանեալ էր թէ չիք հրաման ի Վէնէ՝ տիկ արտաքս տանել զիր տպագրութեան, եւ վասն այնորիկ փոքր մի տրամութիւն ունի ընդ մեզ»²⁵։ Քանի մը ամիս ետք Հ. Պետրոս դեռ աւելի կը շեշտէ Շահմիրի հակառակութիւնը Մխիթարեաններու հանդէպ, զանոնք վնասակար համարելով Հայ աղգին եւ թշնամիներ իջմիածնի կաթողիկոսին, յայտարարելով թէ անվաւեր է Մխիթարեաններու քահանայութիւնը, որովհետեւ անոնք ձեռնադրուած են իջմիածնէ քահանարուած եպիսկոպոսներէ²⁶։

Այս բոլորը կը բացատրեն Շահմիրի դիրքը Մխիթարեաններու նկատմամբ եւ թէ ինչո՞ւ քանի մը տարի ետք, այն է 1778ին, Հայաստանի քարտէսին համար դիմած է Վենետիկ քնակող Պր. Առաքելի մը, որու ձեռքով կատարած է այս գործը²⁷։ Քարտէսը մեր վարդապետներէն կը ճանչցուի իբր «Պր. Առաքելի աշխարհացոյցն»։

24. Հ. Սուքիաս՝ Բանդալայէն, 20 Հոկտ. 1770ին, առ Մեղրոնեան Աբբայ, Վենետիկ։
25. Հ. Պետրոս՝ Պասարէն, 24 Հոկտ. 1770ին, առ Մեղրոնեան Աբբայ, Վենետիկ։
26. «Յազգէն Հայոց իբրեւ 40 տուն դտանին աստ, յորոց երեւելին մեծութեամբ եւ անուամբ պարակարարոյ Պրն. Շահմիրն է, ծանօթ պէկումին, մեծ թըշնամին ուղղափառութեան, եւ եւս առաւել մեզ, զի վնասակարս համարի զմեզ Հայոց աղգին, եւ թշնամիք կաթողիկոսին եւ իջմիածնայ, իբր զի պարտ ու պատշաճ պատիւ ոչ ընծայեմք նոցա, եւ ի նախանձու համարի զմեզ՝ յօրացուցի զչինութենէ իջմիածնայ որպէս զՀոռոմայու եւ զայլոց ոչ յիշատակել, եւ ի ճակատս դրոց մերոց զանուն կաթողիկոսին լոկ գրել. եւ թէպէտ փնջն վրէժ-խնդիր է Հայոց պատուոյն, սակայն ընդդէմ դաւանութեան նոցա բազում մոլորութիւնս ունի, այսինքն չլինել դիւաց յաշխարհի, եւ զայլ բազում այսպիսի. վասն որոյ յոյժ զգուշանայ ի մէջ եւ ջանայ ի ձեռն արբանեկաց իւրոց դաւաճանս եւ ատելիս Երեւեցուցանել զմեզ, եւ միշտ հնարի խափանել զճանապարհ ընդ որ կարելի է մեզ մուտս առնել»։ (Հ. Մանուէլ՝ Մատրասէն, 6 Փետր. 1771ին, առ Մեղրոնեան Աբբայ, Վենետիկ)։

27. Ուրիշ առիթով, այն է 1789 թուականին, Շահմիր դարձեալ կը դիմէ Վենետիկ, Պրն. Առաքելին, իր անձնական ծախսով տպել տալու համար Հայերէն-Անգլերէն բառարան մը։ Պր. Առաքելի համար անհնար էր անշուշտ նման գործի մը ձեռնարկել. ուստի վը դիմէ Ս. Ղազար, անոնց առաջարկելով գործը։ Հ. Միքայէլ Զամչեան 1 Օգոստ. 1789 թուականի նամակով, Պրն. Առաքելի դիմաց կը դնէ զանազան կարեւորութիւններ, թէ ի՞նչ կերպով կարելի է պատրաստել բառ-գիրքը. այս նամակին սեւագիր օրինակին վրայ գրուած է. «Օրինակ թղթոյն տուելոյ պարոն Առաքելին, ըստ խնդրոյ Շահմիրին»։ Նոյն թուականի ետեւ կայ Հ. Միքայէլի Երկրորդ նամակին օրինակը, գրուած չորս տարի ետք, ուր

1786ին, Հ. Յարութիւն Մաղաքեան Պոլիսէն կը դրէ Վենետիկ, միահաղոյն տտանարու համար հարիւր օրինակ, ու Վենետիկէն կ'ընդունի հետեւեալ պատասխանը. «Այսու տէ՛ֆտէրով խնդրեալ ես նաեւ զ100 աշխարհացոյցս տպեալս ի Պր. Առաքելէն. եթէ դպրոցը հարիւր առաքեացուք, ապա թէ ոչ՝ որչափ ինչ եւ գայցէ ի ձեռս մեր»²⁸։ Յաջորդ նամակով մը Վենետիկէն կը գրեն ըսելով. «Ծանիր, զի առ մեզ 50 հատ միայն դտանի, եւ դաւելին, եթէ հարկաւոր է, ի նմանէ (ի Պր. Առաքելէ) պարտիմք գնել, ոչինչ պակաս քան զչորս լիւրէ»²⁹։

Այս վերջին խօսքերը, թէ քարտէսին տպագրութենէն տասը տարի ետք, այն է 1786ին, Մխիթարեանները իրենց տրամադրութեան ունէին 50 օրինակ, խորհրդածել կու տայ որ քարտէսին պատրաստութեան եւ տպագրութեան գործին մէջ անոնք պէտք էին հրական դեր մը ունեցած ըլլալ. դուցէ պատրաստած ըլլային նախադիւծ օրինակը եւ կամ Պր. Առաքելի տուած ըլլա՞ն Հայաստանի տեղանունները եւ կամ ուրիշ դանազան ծանօթութիւններ, թէ եւ այս մասին չունինք դիւանական որեւէ արձագանգ։ Մանաւանդ որ տեսանք թէ ինչպէս այլ առիթով Պր. Առաքել կը դիմէ Մխիթարեաններուն, գըլուխ հանելու համար Պր. Շահմիրի մէկ ուրիշ յանձնարարութիւնը³⁰։

ՔԱՐՏԻՍԱԳՐՈՒԹԵԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ Ս. ՂԱԶԱՐԻ ՄԷՋ

Հայաստանի զոյգ քարտէսներուն (տպ. 1751, 1778) մասին խօսելէ ետք, տեսնենք թէ ո՞րքան մեծ եղած է Մխիթարեան Հայրերու հետաքրքրութիւնը աշխարհագրական քարտէսներու նկատմամբ, ա-

կը մերժուի Պրն. Առաքելի առաջարկը, պատճառ բերելով ժամանակի չգոյութիւնը. «Օրինակ պատասխանույ տուեալ պարոն Առաքելին, վասն խնդրոյ պարոն Շահմիրին, յամի Տեառն 1793 ի Յունուարի 11»։ Այս պարագան եւս կը յատակէ թէ ինչպէս Շահմիր կը խորշի գործել Մխիթարեաններու հետ, ու Մատրասէն վը դիմէ Պրն. Առաքելի, որ իր կարգին կը խնդրէ Մխիթարեաններու օժանդակութիւնը։

28. Հ. Ստեփան Ասլիկեան՝ Վենետիկէն, 5 Օգոստ. 1786ին, առ Հ. Յարութիւն, Պոլիս։

29. Հ. Ստեփան Ասլիկեան՝ Վենետիկէն, 9 Դեկտ. 1786ին, առ Հ. Յարութիւն, Պոլիս։ Պոլիսէն խնդրուած քարտէսները Ս. Ղազարէն զրկուած են հաւանարար երկու անդամով. առաջին գահա զկնի Զատիկիս ելանէ նաւ մի աստի, յորում եղաք զերիս սնտուկս, մինն գրեանց, մինն աշխարհացոյցից եւ այլ ոմանց պատկերաց...» (Մեղրոնեան Աբբայ՝ Վենետիկէն, 7 Ապրիլ 1787ին, առ Հ. Յարութիւն, Պոլիս)։ Երկրորդ «Երկրոսին սնտուկս գրեանց յառաքեալս յայսմ նուագի, է փնչ զոր նախընթաց գրովդ խնդրեալ էիր, որպէս ճաշոցն եւ աշխարհացոյցը Հայաստանեայց Պր. Առաքելին»։ (Հ. Ստ. Ասլիկեան՝ Վենետիկէն, Յունիս 1787ին, առ Հ. Յարութիւն, Պոլիս)։

30. Տե՛ս թիւ 27 ծանօթութիւնը։

ուանց խօսելու աշխարհագրութեան մասին, որ առանձին քննութեան կարօտ գլուխ մըն է:

Մխիթար Աբբահօր օրերուն իսկ կը գտնենք առաջին հետաքրքրութիւնը քարտիսագրութեան հանդէպ. քիչ առաջ տեսանք թէ Հաշուեգրքին մէջ նշանակած է գումարը որ ծախսած է անոնց դնումին համար, եւ թէ ինքը իր կենդանութեան քերել տուած է Ամսդերտամի քարտէսը Ս. Ղազարի հիւրասենեակին համար. ի՛րն է դադարփարը զարդարելու Հայկազեան բառարանը քարտէսներով եւ իր ձեռքերով հայթաթած է նախանիւթերը որպէսզի իր աշակերտները դըլուխ հանեն դրուած ծրագիրը: Մխիթարի մահէն միայն երկու տարի ետք (1751) լոյս կը տեսնէ Հայաստանի քարտէսը:

Նոյն տարին, այն է 1751ին, Անթէսքի Հ. Գէորգ կը ճամբորդէ դէպի Արեւելք, ու նաւուն վրայ կը տեսնէ «գիրգ մի տալադրեալ լի պատկերօք աստղաբաշխականօք, եւ գոր ինչ մեք ունիմք կայ անդ, եւ աշխարհացոյց բազում. բոլորն տաճկի գրով եւ ֆարսի բարբառով, եւ է տալադրեալ ի Ստամպուր»³¹: Այս վկայութենէն կարելի է հաստատել թէ Ս. Ղազարի Հայրերը կը հետաքրքրուէին նման հարցերով՝ որ Հ. Գէորգ կը հաղորդէ անոնց մանրամասնութիւններ, ու «գոր ինչ մեք ունիմք» բացատրութիւնը նշան է թէ արդէն սկսած են հաւաքել զանազան քարտէսներ:

1765 թուականն ենք. Հ. Չաքարիա Պոլիսէն դարձած է Վենետիկ. ինքն էր որ Հ. Իգնատիոսի հետ սկիզբ տուած էր հայկական քարտէսներուն, ու այս թուականիս հետամուտ է վանքին մէջ պատրաստելու Եւրոպայի քարտէս մը. երբ կ'ուշանայ դործը եւ իր ներկայութիւնը Պոլսոյ մէջ անհրաժեշտութիւն կը դառնայ, Հ. Յակոբոս Չամչեան Պոլիսէն կը գրէ Աբբահօր. «եթէ եզերեաց զդործս իւր եւ զքանդակելն աշխարհացոցին Եւրոպիոյ, աղաչեմ, եթէ կարելի է, առաքեցէք»³²:

Պոլիս ալ, ժողովուրդին մէջ, կը նշմարուի հետաքրքրութիւն մը քարտէսներու հանդէպ, մանաւանդ Եւրոպայի: Հ. Յակոբոս Չամչեան, որ երկար տարիներ ապրած էր Պոլիս, եւ լաւ թափանցած՝ ժողովուրդին հոգեբանութեան մէջ, չէր խաբուեր անշուշտ միայն մէկ կամ երկու անձերու հետաքրքրութենէն՝ երբ կը գրէր Աբբահօր 1768 Դեկտ. 18ին. «աշխարհացոյցն Եւրոպիոյ, եթէ տակաւ ինչ լայնատարած փորագրեալ գտանիւր այժմ, կարծեմ թէ յայսմ ժամանակի ոչ բաւէին հազար աշխարհացոյց տալադրեալք, զի բնաւքն վաճառեալ լինէին, եւ կարծեմ թէ երկիցս քանդակիւր աշխարհա-

31. Հ. Գէորգ՝ Չանթայէն, 7 Մայիս 1751ին, առ Մելքոնեան Աբբայ, Վենետիկ (ընդգծումը մեզմէն - Ս. Ճ.):

32. Հ. Յակոբոս՝ Պոլիսէն, 18 Դեկտ. 1765ին, առ Մելքոնեան Աբբայ, Վենետիկ:

ցոյցն այն, զԵւրոպիա իմանամ, սկսեալ ի կղզեաց երանելեաց մինչեւ ի Պարսիկս եւ դոնեա մինչեւ ի ծովն Կասպից»:

Վանքին մէջ, Հ. Իգնատիոսէ աւելի Հ. Չաքարիա նկատուած է այս տեսակէտով Մխիթար Աբբահօր աւանդութիւնը պահողն ու անցընողը յաջորդ սերունդին. ինքն է որ այս նիւթերուն մասին խօսած է Հ. Յակոբոս Չամչեանի, տուած է անոր քարտիսագրութեան առաջին ծանօթութիւնները. եւ որով «արկը պահանջելուն» Հ. Յակոբոս կը դիմէ Հ. Չաքարիայի՝ 22 Դեկտ. 1772 թուակիր նամակով. «աղաչեմ զհայրութիւնդ, առաքել ինձ զօրինակն չափուց ի շինել զնոր աշխարհացոյց, քանզի զօրինակեալն իմ յօրինակէն հայրութեանդ կորուսեալ եմ. քաղումս որոնեցի, բայց ոչ գտի... աղաչեմ, մի՛ դանց առնել, այլ առաքել»:

Հ. Չաքարիա Ալեքսանեանի դիւանին մէջ կը գտնենք աշխարհագրութեան վերաբերեալ մենագրութիւններ, թարգմանութիւններ, եւ ինչ որ մեզ կը հետաքրքրէ՝ ձեռագիր քարտէս մը Արաբիոյ: Ասիկա այնպիսի կատարելութեամբ մը կը ներկայանայ մեզի՝ որ երկար ու մանրադնին քննութիւն հարկ է որոշելու համար թէ եղած օրինակը տալադի՞ր է կամ ձեռագիր: Ձեռագիր այս միակ օրինակին մեծութիւնն է 35.3×48 հրդմ.³³:

33. Հ. Չաքարիա Ալեքսանեանի դիւանին մէջ, բացի հոգեւոր նիւթեր չօգտիող ձեռագիրներէ, պահուած կը գտնենք հետեւեալ երեք աշխատութիւնները.

Ա. «ԲԱՌԱՐԱՆ ԱՇԽԱՐՀԱՅՈՒԹԱԿԱՆ, յորում գրիմ ամեմայն քաղաքութիւնիմ եւ գաւառք, երեսիլի քաղաքք, կղզիք եւ գետք աշխարհիս ըստ ներկայ որպիսութեան իւրեանց: Հաւաքեալ ի յընդունելի գրեանց լատինացոց արաբերէնց ի յընտիր եւ ի նոր հեղինակաց նոցա: Աշխատասիրութեամբ աշակերտաց Մխիթարայ Մեծի Աբբայի եւ վարդապետի Սեբաստացոյ: Հատոր առաջին, յորում գրեալ լինի զաշխարհաց ինչ Ասիոյ: Մեծութիւնն է 18,5×25,5 հրդմ. նոտրդիր գրչութեամբ, երկսիւն (8,5×21,2). ունի 319 էջ, որու առաջին 268 էջերը կը կազմեն բուն աշխարհագրական բառգիրքը, իսկ էջ 271-319 յաւելուած մըն է Արաբիոյ եւ Եգիպտոսի վերաբերեալ: Արաբիոյ մասին համար է որ Հ. Չաքարիա պատրաստած է Արաբիոյ առանձին քարտէսը, որու ձախակողմի վարի անկիւնը առանձին քաղաքութիւնի մէջ (9×9,5 հրդմ.) «Պատկեր Գեապէ ճամբին եւ պէսպէս տեղեաց նորա»:

Բ. «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ, Հ. Չաքարիայի մղտեսի Ալեքսանեան Ակնեցւոյ: Մեծութիւնն է 13×19,3 հրդմ., միասիւն: Ունի ութը գլուխներ հետեւեալ խորագրերով.

Յառաջաբանութիւն (էջ 1-4).

Համառօտ եւ նախընթաց իմն բացատրութիւն աշխարհացոցիս նկարելոյ [էջ 5-7: էջ 4 եւ 5ի միջանկեալ գետեղուած է տալադրուած փոքր աշխարհացոյցը (1747)].

Ա. Յաղագս աշխարհագրութեան, թէ զինչ իցէ աշխարհագրութիւնն եւ ի քանիս բաժանի (էջ 7-9).

1781ին Հ. Զաքարիա դարձած է Պոլիս, ուր հովուական դործին կցած է պրաւորական աշխատանքը, նուիրուած է իրեն սիրելի նիւթին՝ աշխարհագրութեան. կու տայ ուղղութիւններ՝ թէ Ս. Ղաղաւրի մէջ ինչ ծրարելիքով պէտք են կատարուել աշխարհագրական հատորներու հրատարակութիւնները, թէ անոնք պէտք է ճոխանան քարտէսներով³⁴: Քանի մը տարի ետք կը մտածէ Պոլիսէն դառնալ Վենետիկ՝ պործին դիւլիսը անցնելու համար, սակայն «մինչեւ ցգալս իմ այդը, փորագրեսցէ Հ. ինչատուրն (Սիւրմէլեան) ի վերայ փոքր պղնձոյ միոյ վասն փորձոյ եւ ուսանելոյ քէրս փորագրել զտառս (հայկականս) զաշխարհացոյցիկ մի, որոյ դաւառի եւ կամիցիք, որպէսզի ուսցի եւ զփորագրելն ի վերայ պղնձոյ, զոր օրինակ ես եւ լուսահոգի Հ. Իզնատիոսն փորագրեցաք ի վերայ պղնձոյ զաշխարհացոյցս եւ զայլ սրատկերս»³⁵:

Բ. Յաղապ աստիճանաց գնտոյ երկրին, որք նկարին ի յաշարհացոյցս ի ձեռն գծից (էջ 9-14).

Գ. Յաղապ աստիճանաց լայնութեան (էջ 14-19).

Դ. Յաղապ հինգ դօտեաց որք դնին ի վերայ երկրի (էջ 19-21).

Ե. Յաղապ Երկարութեան եւ կարճութեան տունջեան եւ դիւերոյ, որք զիտացեալ լինին աստիճանօք լայնութեան (էջ 21-25).

Զ. Թէ որչափ մղոն իցէ իւրաքանչիւր աստիճան (էջ 28-29).

Է. Յաղապ մղոնական չափուց եւ մասանց նորին, զոր ի կէր առնուն աշխարհագիրք եւ Երկրաչափք (էջ 30-32).

Ը. Յաղապ բաժանման երկրի եւ ծովու ի հասարակի (էջ 33-42):

Գ. «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ, ՄԱՆԱԻԱՆՈՒԹԻՒՆ ԸՍՏ ՎԵՐՔԻՆ ԺԱՄԱՆԱԿԻՍ»: Մեծութիւնն է 13×19 հրդմ. ունի 17 էջ: Տեարակիս մէջ կայ Եւրոպական լեզուով ձեռագիր քարտէս մը «Armenia Major» վերտառութեամբ, 19,4 × 22,2 հրդմ. մեծութեամբ. սա եւս Հ. Զաքարիայի դործն է: Առանձին քարտիկեան թուղթի մը վրայ կայ սա գրութիւնը. «Վասն քարտիկի զաշխարհացոյցակ գիծս երկայնութեամ եւ լայնութեամ, որոց միջոցք յիշեալք հաւաքին եւ սղին միմէի ի միջակէտն, երբ գզումսն աշխարհի մկարես ի վերայ տափարակ քղքոյ»:

34. «Եթէ ունիք զաշխարհագրութեան գիրքն տպագրել, բարի է, այլ չգիտեմ թէ որպիսի ինչ է, եւ թէ մեծ իցէ եւ եթէ փոքր. բայց ըստ իմ կարծեաց լաւ լինի զի տպագրեալիք առ այժմս զմի ի յերկուցս յայտցանէ: Առաջինն կոչի Dizionario Geografico, եւ է երկու հատոր in ottavo. Երկրորդն կոչի Dizionario Gramatica, եւ է մի հատոր in ottavo. զորն եւ կամիք դուք ընտրեցէք. բայց ի նախաբանութեան նոցա խոստասլիք թէ ըստ ժամանակին ունիմք տպագրել ճոխագոյն զաշխարհագրութեան հանդերձ աշխարհացոյցական պատկերօք իւրաքանչիւր դաւառաց: Վասնզի գիտէք որ ես ճոխագոյնս պրեալ եմ զոմանց դաւառաց աշխարհիս եւ ունիմ առ իս, եւ զայլոցն ունէաք այդը շարունակել, բայց պատահաբան դիպելով մերոյս Միաբանութեան, անգործ մնաց այն. բայց թէ Տէր Կամեցի եւ Եկից այդը, ունիմք յառաջ տանիլ զայն» (Հ. Զաքարիա՝ Պոլիսէն, 1 Յունուար 1781ին, առ Մեղեոնեան Աբբայ, Վենետիկ):

35. Հ. Զաքարիա՝ Պոլիսէն, 6 Հոկտ. 1784ին, առ Մեղեոնեան Աբբայ, Վենետիկ:

Հ. ինչատուր Սիւրմէլեան արդէն իսկ սկսած էր պղինձի վրայ փորագրութեան նուիրուել. 1779 տարուոյն Օրացոյցը առաջին անգամ ընկալով իւրաքանչիւր ամսուն համար ունէր յատուկ պատկեր մը, որոնց զծագրութիւնը կատարած էր Հ. Յակոբոս Զամչեան եւ փորագրութիւնը Հ. ինչատուր³⁶:

Մինչ այդ վանքին մէջ տիրած էր խանդավառութիւնը պատրաստելու աշխարհագրութեան ընդարձակ հատոր մը կամ հատորներ. դործին դիւլիս անցած էր Հ. Ստեփանոս Ագոնց, որ նամակներով յարաբերութեան մէջ կը մտնէ աջ ու ձախ տեղագրական տուեալներ հաւաքելու, յատկապէս Հայաստանի վերաբերեալ: Հ. Զաքարիա խանդավառութեամբ կը պատասխանէ՝ թէ «պարապիմ հանդարտօրէն ի տեղեկանալ զայնց իրաց Հայաստանու վերաբերեալ առ աշխարհագրութիւն, զորոց գրեալ էր յանցեալ ամին առ իս մեր Ագոնց Հ. Ստեփանոսն, եւ ըստ այնմ նկարեմ եւս գնոցին աշխարհացոյցսն, վասնզի բարդում սղալանս դոռաք յառաջին փորագրեալն մեք՝ յամին 1751»³⁷: Պոլսաբնակ Հայրերը կը վկայեն Հ. Զաքարիայի համար թէ փութկոտութեամբ նուիրուած է աշխարհագրութեան եւ պատրաստելու քարտէսներու, եւ մանաւանդ «ունի սրբագրութեամբ նկարագրեալ առ ինքն զաշխարհացոյցն Հայաստանեայց եւ զայլ աշխարհացոյցս»³⁸:

Այս բոլոր մանրամասնութիւնները կը գրգռեն Ագոնցի ախորժակը. ինքն ալ որ Ս. Ղաղարի մէջ նուիրուած էր Հայաստանի աշխարհագրութեան, կարօտ կը դգար քարտէսի մը՝ աւելի ճշգրիտ քան ցարդ եղածները. ուստի կ'ուղղուի միակ աղբիւրին, Հ. Զաքարիայի, խնդրելով զանազան տեղագրական ստուգումներ: Ագոնցի նամակը քարտիկագրութեան պատմութեան համար կարեւոր համարելով՝ կը հրատարակենք նոյնութեամբ:

«Մանեայ ի թղթոյ վերապատուութեանդ որ առ Գերյարգելի Աթբահայրն, եթէ պարտալիք ի տեղեկանալ զիրացն Հայաստանու, զորոց եւ խնդրեալ էի ի վերապատուութենէդ. միանդամայն եւ նըկարէք զաշխարհացոյցս նոցա, սրբագրելով զվրիպակս առաջնոյ աշխարհացոյցի մերոյ, որ ոչ սակաւ խնդրութիւն եղեւ ինձ եւ արգահատութիւն սրտի. քանզի տառապէի յարժամ վասն Հայաստանու, ոչ այնչափ վասն նախնի հանգամանաց նորա, զի դայն որչափ ինչ

36. «Ուրախացայ ընդ առատութիւն պատկերաց իւրաքանչիւր ամ(ս)ոց, ստուերագրելոցն ի Հ. Յակոբոսէն եւ փորագրելոցն ի Հ. ինչատուրէն, որովք ունիք տպագրել զօրացոյցն ամին 1779» (Հ. Զաքարիա՝ Պոլիսէն, 3 Փետր. 1778ին, առ Մեղեոնեան Աբբայ, Վենետիկ):


37. Հ. Զաքարիա՝ Պոլիսէն, 6 Հոկտ. 1784ին, առ Մեղեոնեան Աբբայ, Վենետիկ:


38. Հ. Սուքիաս՝ Պոլիսէն, 25 Փետր. 1785ին, առ Մեղեոնեան Աբբայ, Վենետիկ:

հնար էր՝ ի դրոց նախնեաց մերոց հաւաքեցաք, այլ վասն այժմեան որպիսութեան, որ բազում լոյս ընծայէ եւ նախնոյն, որ բազում ուրեք միթին եւ է անորոշ թէ՛ ըստ դրից, թէ՛ ըստ անուանց, եւ թէ ըստ ալոց հանգամանաց, եւ չունիմք զոք տեղեակ այնց կողմանց. իսկ դիմել առ աշխարհագրութիւնս եւրոպէացւոց վայրապար է, զի կամ ոչինչ գրեն զՀայոց եւ կամ սակաւ եւ վեր ի վերոյ, եւ այն լի սխալանօք: Թէպէտ զտեղեաց ինչ Հայաստանու ինչ ինչ տեղեկացաք յոմանց եկելոց ի կողմանց, որպէս զկողմանց Եդեսիոյ, Հոսմկլայի, Բասենոյ եւն., բայց տակաւին եւ այլ բազում տեղիք թերի մնացին, զոր յուսամ թէ աշխատասիրութիւն Վերապատուութեանդ լրացուացէ, թէ ոչ ըստ ամենայնի, դէթ ըստ մեծի մասին, եւ ըզմալի էր մեզ յոյժ, եթէ զոր ինչ առ սակաւ սակաւ հաւաքէք եւ լնդ դրով արկանէք՝ հետզհետէ առաքէիք առ մեզ, զի մեք աստ ի կարգի մերոցն դասաւորէաք եւ զայնս:

Յայսմ վայրի դարձեալ վստահացեալ ի բարեյօժար կամս Վերապատուութեանդ, խնդրեմ տեղեկանալ՝ թէ կարելի է եւ ստուգել մեզ զհետագայս. նախ թէ Տիգրիս կամ Շատ գետն ուստի՞ ելանէ, զի ի մեր աշխարհացոյցն գլուխ Տիգրի(ս գետոյ)ն եղեալ կայ մերձ ի Խարբերդն, բայց այլք ասեն թէ ի Խարբերդէն ոչ բղխէ ջուր ինչ: Երկրորդ, աշխարհացոյցն մեր առ Խլաթ քաղաքաւ եղեալ կայ լիճ ինչ, յորմէ ելանէ գետ, որ անցեալ առ Խոյ քաղաքաւ, եւ առ չորս քաղաքաւ երթայ խառնի յԵրասխ. ուղի՞ղ է այս եւ զի՞նչ լիճ է այն. մի գուցէ իցէ Գայլոտոյ ծովակն, զոր յիշէ Խորենացին, բայց յայլոց երկց մեծամեծ ծովակաց: Եւ եւս խնդրեմ տեղեկութիւնս ինչ եւ վասն Քասաղտան ծովակին, որ այժմ որպէս թուի՝ ծով Ուրմիոյ կոչի: Երրորդ, այժմեան Ասորպատական կամ Ասորպէճան դաւառն ո՛րչափ սահմանս Հայաստանեայց ընդ իւրեւ պարունակէ: Զորրորդ, մեծ բերդն Թաման, որ յերկրին չեքքեզաց է, մերձ ի Խրիմ, ընդ որո՞յ տէրութեամբ է. եւ թէ հնար է տեղեկանալ՝ գրեալիք մեզ սակաւուք եւ զստորագրութիւն այնր բերդի, զորմէ գիտեմք զի նախ քան ըզվերջին հաշտութիւն Օսմանցւոց ընդ Մոսկովաց՝ ընդ տէրութեամբ Մոսկովաց էր, այլ զկնի հաշտութեան թէ յո՞յր ձեռն էանց, ոչ գիտեմք. եւ թէ կա՞ն արդեօք ի շրջակայս նորա երեւելի քաղաքք կամ աւանք: Եւ եւս Գիլան դաւառն Պարսից, ընդ տէրութեամբ Մոսկովաց է այժմ թէ ոչ: Հինգերորդ. Տիփիս մայրաքաղաքն Վրաց, ուր եղեալ կայ յաշխարհացոյց մեր, ա՞նդ է տեղի նորա թէ ոչ, քանզի մեր պատմագիրք առհասարակ զՏիփիս Փայտակարան կոչեն, եւ մերձ ի ծովն Կասպից դնեն: Խնդրեմ ներել համարձակութեանս, որ անդադար աշխատութիւնս յաւելում ծերունի Հօրդ»³⁹:

39. Հ. Ստ. Ազոնց՝ Վենետիկէն, 8 Դեկտ. 1784ին, առ Հ. Զաքարիա, Պոլիս:





Համառարած Աշխարհացոյց (տպ. Վենետիկ, 1747)

Աշխարհացոյց Հայաստանեայց
ըստ հին եւ նոր աշխարհագրաց
(տպ. Վենետիկ, 1751)

U ኑ ሂኑ ስብሂ



Ադոնցի այս նամակին պատասխանը տուած պիտի ըլլայ ան-
շուշտ Հ. Զաքարիա, որ դժբախտաբար մեր ձեռքը չէ հասած: Գործ-
նականին մէջ՝ Ադոնց չի յաջողիր Հայաստանի նոր քարտէս մը փո-
րադրել տալ, հակառակ որ հաւաքած էր բաւական նորութիւններ.
Գրաւոր իր աշխատութիւնն իսկ՝ կը թողու ինճիճեանի ու ինք կը
մեկնի Թրանսիլլանիա⁴⁰:

Տէր Ղուկաս Օղուլլովեան, որ ապա կ'անդամակցի Մխիթար-
եան Միաբանութեան, եղած է ինքն ալ սիրող մը աշխարհագրու-
թեան եւ քարտէսներու. գիտենք թէ 1790ական թուականներուն հե-
տամուտ է Պոլսոյ մէջ պատրաստելու Հայաստանի քարտէս մը, ինչ
որ մնացած է մութի մէջ եւ հրապարակ չէ ելած:

1784 թուականին Ս. Ղազարի մէջ կը յայտնուի բացառիկ տա-
ղանդով օժտուած Հ. Եղիա. Խնտաղեան, որ երեւան կու գայ կարգ-
մը քարտէսներով, ճոխացնելով հայկական քարտիչագրութեան պատ-
մութիւնը, ցոյց տալով սքանչելի ճարտարութիւն ձեռքի: Իր մասին
Հ. Մկրտիչ Աւգերեան վանքի ժամանակագրութեան մէջ Վարձանա-
դրէ հետեւեալը. «էր բնութեամբ չոր եւ հրային, երկայնահասակ,
ուղղորդ, քաջարարոյ եւ ազնուարարոյ, ընդ ամենայնի ամենայն.
քաղցրաձայնութեամբ մի միայն, աջոյնանում եւ աշխատասէր. եւ
եթէ պարտ է սակաւուք դրազումս յայտնել, բնութեամբ էր աստա-
հակ, ալ առաքինութեամբ հրեշտակ: ... Մեծ անուն եհան իրա-
ւամբք եւ ճարտար եւ աշխատարի փորագրութիւն մեծ եւ փոքր աշ-
խարհացոյցից Խնտաղեան Հ. Եղիային մերոյ»⁴¹:

Դիւանական նամակներու մէջ մինչեւ 1784 թուականը լուսթիւն
կը տիրէ իր մասին. Մեքենեան Աբրահայր առաջին անդամ ըլլալով
վինք կը յիշէ՝ Պոլիս գրած իր մէկ նամակին մէջ. «վասն փորելոյ
դպրանձեայս մի՛ ինչ հոգար, զի բազումք գտանին որք կարողանան
յայն գործ. եւ ի հասանել այդ Հ. Սուքիասին եւս տեսանես զաշ-
խարհացոյցս նորոգ փորեալս ի Հ. Եղիային»⁴²: Եւ իրապէս Հ. Սու-
քիաս զոյգ քարտէսներով կը մտնէ Պոլիս 1785ի. Փետրուարին, եւ
ուրախութեամբ կ'իմացնէ Աբրահայր թէ «Զերկոսին զաշխարհա-
ցոյց պատկերան, դիտրադրեալս ի Հ. Եղիային, զարմացոյց զամե-
նեսեան...: Ի տեսանելն Վ. Հ. Զաքարիային զաշխարհացոյցն Հ.

40. Հ. Ստ. Ադոնցի հաւաքած աշխարհագրական ծանօթութիւնները՝ Հ. Ղ. Ին-
ճիճեան անցուցած է իր հրատարակած հատորին մէջ. Աշխարհագրութիւն չորից
մասանց աշխարհի, Մասն Ա., Հտ. Ա., տպ. Վենետիկ, 1806:

41. ԱԻԳԵՐԵԱՆ Հ. Մ., Ժամանակագրութիւն վամացս, հտ. Բ., Մասն Բ., էջ
762, 747:

42. Մեքենեան Աբրայ՝ Վենետիկէն, 23 Նոյեմբ. 1784ին, առ Հ. Զաքարիա, Պոլիս:

Եղիային, ցնծացեալ բերկրեցաւ յոգի իւր»⁴³, եւ քանի որ արքայ-գրութիւններ ընելով զիտողութիւններ կը դրէ, որպէսզի Հ. Եղիա յաջորդաբար կատարելագործէ իր արհեստը:

ՀԱՄԱՏԱՐԱՐ ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ (տպ. Վենետիկ, 1784)

Հ. Սուքիաս Աղամալեանի Վենետիկէն Պոլիս տարած գոյգ քարտէսներէն առաջինը փոքրադիր Համատարած աշխարհացոյց մըն է, չորրջը ունենալով լայնութեան, երկարութեան, ժամերու, ամիսներու իշխմայական զօտիներու եւ այլ չափերու մասին ծանօթութիւններ: Քարտէսին տողին աջ անկիւնը զարդարուն քառակուսիի մը մէջ տրուած են տեղագրութեան համառոտութեան ձեւերը. իսկ ձախ կողմը՝ չքեղ զարդանկարներու մէջ՝ քարտէսին անուանացոյցը:

Քարտէսը իր ամբողջութեամբ եւ կատարելութեամբ կարելի է համարել փոքրիկ գլուխ գործոց մը, մանաւանդ երբ մտածելու ըլլանք որ սա առաջին քարտէսն է Հ. Եղիա Էնտաղեանի հրաշագործ մատներուն: Այսքան կատարելութեան հասած ըլլալու համար, անտարակոյս կատարած է ուրիշ փորձեր, որոնց վրայ թուական չըլլալով՝ չենք կրնար տոյգ կերպով խօսիլ անոնց մասին: Փորագործուած է Հ. Ստեփանոս Ադոնցի հրատարակելի Աշխարհագրութեան հատորին համար (էջ 400), ուր ներկայիս կը տեսնենք ուրիշ շատ մը փորագրութիւններ (ոչ քարտէսներ), որոնք իրաւացիօրէն կըրնանք վերագրել նոյն Հ. Եղիային:

1784ին լոյս կը տեսնէ Հ. Միքայէլ Չամչեանի Հայոց Պատմութեան առաջին հատորը, որու վերջաւորութեան կայ քարտէս մը 20×42 հրդ. մեծութեամբ, «Գաւառք / Հայաստան / աշխարհի / ըստ հին պատմութեան / վերջնաց» գրութեամբ, որ գուցէ Հ. Եղիայի առաջին փորձերէն մէկը ըլլայ. գոնէ այդ կը մատնանշէ քարտէսը՝ իր ընդհանուր գիծերուն մէջ: 1785ին Հ. Եղիա կը հրատարակէ Համառոտ պատմութիւն օղապարիկ գնտոյ, 16 էջոց տետրակ մը, ուր կայ գեղեցիկ փորագրութիւն մը յիշեալ օղապարիկին, $15 \times 23,5$ հրդ. մեծութեամբ, փորագրուած Հ. Եղիային:

Վերեւ մէջբերուած նամակի մը հատուածին համաձայն, 1784ին Հ. Եղիա երկու քարտէս պատրաստած է ու ղրկած Պոլիս. անոնցմէ մէկը չկրցանք որոշ կերպով տողադել. գուցէ ըլլայ Չամչեանի Պատմութեան Ա. հատորին մէջ գտնուածը, որու մասին խօսեցանք, մինչ երկրորդն է Համատարածը, որ աշխարհագրութիւն կը պատճառէ Հ. Չաքարիայի: Այս քարտէսէն հազիւ քանի մը օրինակ կը տպագրուի, քանի որ փորագրուած էր Ադոնցի հրատարակելի Աշխարհագրութեան գիրքին համար. բայց երբ կ'ուշանայ ասոր հրատար-

43. Հ. Սուքիաս՝ Պոլիսէն, 25 փետր. 1785ին, առ Մեղեոնեան Արքայ, Վենետիկ:

րակութիւնը, Պոլիս գտնուող Հայերը կը մտածեն առանձին ծախել Համատարածը. «այն աշխարհացոյցն որք փորագրեցան վասն աշխարհագրութեան՝ առաքեսջիք յիւրաքանչիւրոցն յիսունական հատ, զի բազումք խնդրեն եւ ոչ տամք ձրի, այլ տամք վաճառել զբամովք, եւ այսպէս յառաջ քան զաւարտիլն հանեմք զգինն»⁴⁴: Երեք ամիս ետք զարձեալ կը կրկնուի նոյն խնդրանքը, մանաւանդ թէ թախանձանքը, որովհետեւ նոյն գրիչը կ'ըսէ. «ես անհնարին ամօթով մնացի առաջի թախանձեցուցիչ անձանց, մանաւանդ առաջի Սեղբոսեանց, Տիւղեանց եւ այլ երեւելի անձանց»⁴⁵: Վենետիկէն տեղիք չեն տար. ու յաջորդ տարիներուն երբ Պոլիսէն զարձեալ կը պնդեն, ցաւ յայտնելով թէ այսքան կատարեալ գործ մը կը մնայ գրուանի ներքեւ⁴⁶, վանքէն կը դրեն բուն պատճառը չղրկելուն. քարտէսին պղինձը գործածութեամբ կրնար մաշիլ ու աշխարհագրութեան գիրքին համար դառնալ անպէտ: Պոլիսէն եղած պատճառաբանութիւնները ուղիղ էին, այսինքն՝ մինչեւ հատորին լոյս տեսնելը օգտագործելը պղինձը ու անոր եկամուտով փորագրել նոր պղինձ մը եւ կամ պղինձներ. սակայն արդէն տարիներ ահա՛ չէին, վանականները վստահութիւն չունէին իտալացի փորագրիչներու վրայ, — ինչպէս պիտի տեսնենք, — ու Հ. Եղիա եւս վախճանած էր⁴⁷, այնպէս որ խոհեմութեան ճամբէն քալելով Համատարած այս փոքրիկ քարտէսը իր բոլոր կատարելութեամբ եւ գեղեցկութեամբ կը վերապահեն Ադոնցի հրատարակելիք աշխարհագրութեան հատորին, մինչեւ 1817 թուականը, պահելով ստուերի մէջ երեսուն եւ հինգ տարիներ:

44. Հ. Յարութիւն՝ Պոլիսէն, 10 Հոկտ. 1787ին, առ Մեղեոնեան Արքայ, Վենետիկ:

45. Հ. Յարութիւն՝ Պոլիսէն, 10 Դեկտ. 1787ին, առ Մեղեոնեան Արքայ, Վենետիկ:

46. «Վասն միայնակ աշխարհացոյցին զբազում պատճառս գրեալ էիք թէ ոչ կարէ լինիլ ի կազմել ընդ այլ չորից... սակայն ցաւիմ եւս վասն երկուց. նախ վասն այն զի այդպիսի գործք, որ տարածելով ի ձեռս բազմաց պարծանք է հասարակութեանս, մնայ այնպէս խափանեալ (եւ մի՛ առէք թէ հարկաւորապէս ելանէ ի դուրս ընդ աշխարհագրութեան), զի յայնժամ ոչ անցանէ ի ձեռս բազմաց, այլ սակաւուց, եւ այն զի այդ գոլով յայնժամ ընդ աշխարհագրութեան՝ չի համարի մեծ ինչ, զոր օրինակ ցանկն Հայոց Պատմութեան է յոյժ քերականց եւ աշխատալի գործք, բայց գովութիւնն միշտ ընծայի Պատմագրքին եւ ոչ թէ ցանկին: Երկրորդ վասն այն ցաւիմ, զի ի վաճառիլ աչիւր, սակաւ առ սակաւ, դինն ելանէ քանի մի անգամ, եւ այնու դրամովք կարող էիք տալ փորագրել ոչ միայն զայդ այլ զայլս եւս, որպէս եւ հարկաւոր իսկ է ունիլ զայլ եւս զբազում աշխարհացոյցս, գոնէ երեւելի քաղաքաց» (Հ. Յարութիւն՝ Պոլիսէն, 22 Ապրիլ 1790ին, առ Մեղեոնեան Արքայ, Վենետիկ):

47. «Ձայս ծանիր զի ի վասն ոչ ոք է որ կարող էցէ փորել աշխարհացոյց, իսկ արտաքոյ օտար ազգի տալ փորել, լինի միայն զգինն եւ ոչ զտառն. իսկ թէ զխաղ եւ իցէ տացուք փորել, լինի ամենավատթար իմն, եւ փոխանակ գովութեան ընկալցուք զպարսաւ. եւ զայս զոր գրեմ փորձիւ գիտեմք» (Մեղեոնեան Արքայ՝ Վենետիկէն, 31 Մայիս 1790ին, առ Հ. Յարութիւն, Պոլիս):

ԵՒՐՈՊԱ (տպ. Վեմետիկ, 1786)

ԱՓՐԻԿԵ (տպ. Վեմետիկ, 1786)

ԱՄԵՐԻԿԱ (տպ. Վեմետիկ, 1787)

ԱՍԻԱ (տպ. Վեմետիկ, 1787)

Համատարած աշխարհացոյցի փորագրութենէն ետք (1784), Հ. Եղիա կը նուիրուի փորագրելու պատկերը՝ Համառօտ պատմութիւն օդապարիկ գնտոյ դիրքին (1785), որու հեղինակը ինքն էր. ասկէ ետք կ'անցնի չորս աշխարհամասերու առանձին առանձին քարտէսներու փորագրութեան, հետեւեալ կարգով.

ա. Եւրոպա, 43 × 64 հրդմ. մեծութեամբ. ձախակողմի վերի անկիւնը ունի չքեղ զարդապատկեր մը, ուր կը տեսնուի կով մը, օդապարիկ, դիրքեր, ժամացոյց, երկրաչափական դործիքներ, իբր յատկանշէր այս երկրամասին: Զարդապատկերին մէջ կայ քարտէսին անուանացոյցը:

բ. Ափրիկէ, 47 × 63,3 հրդմ. մեծութեամբ. ձախակողմի վարի անկիւնին վրայ ունի զարդանկարը, ուր բազմած է առիւծ մը, ծառի ճիւղերու մէջ օձ մը, արմաւենիներ ու անապատը:

գ. Ամերիկա, 46 × 62,4 հրդմ. մեծութեամբ. ձախակողմի վերի անկիւնը ունի անուանացոյցը, զարդարուած կոկորդիլոսով, արմաւենիներով, բազմաթիւ նաւերով եւ ճամբորդական մեծղի ծրարներով:

դ. Ասիա, 46 × 63,8 հրդմ. մեծութեամբ. ձախակողմի վարի անկիւնը ունի անուանացոյցը, առնուած զարդանկարի մէջ, ուր կը տեսնուին ուղտ, պատերազմական զրահներ ու դրօշակներ:

Չորս քարտէսներ, որոնք միասնաբար կը կազմեն ամբողջութիւն մը, իրենց պարզութեան մէջ հմայիչ, ու կը յափշտակեն այս նիւթով զբաղող հնասէրին հոգին: Ո՛չ միայն այսօր, այլ իր աստեղին եւս գիտցած են գնահատել թէ՛ քարտէսը եւ թէ՛ զանոնք փորագրող Հ. Եղիա ինտազեանը, ու դիւանի նամակներուն մէջ միայն նպաստաւոր տողեր է որ կը գտնենք իր մասին: 1786ին, Հ. Գաբրիէլ Աւետիքեան իր մէկ նամակին մէջ կը գրէ. «փորագրութիւն աշխարհացոյցաց յառաջանայ Տերամբ. Ափրիկէինն կիսով չափ եղեալ է, իսկ Եւրոպայինն բնաւ վճարեցաւ, զորոյ դերիս կամ զչորս առաքեմք առ ձեզ... եւ զայս ոչ միայն զի դուք տեսչիք եւ խնդաւորիք, այլ զի եւ այլք տեսցեն եւ այնու զբաղեացին առ ժամանակ մի»⁴⁸: Ուրիշ մը, յետ տալու ծանօթութիւն Օդապարիկ գրքին մասին եւ կոչելու Հ. Եղիան յաջողաճեռն քաղմահաւաս, կ'աւելցնէ. «փորագրութիւն

48. Հ. Գաբրիէլ՝ Վենետիկէն, 7 Ապրիլ 1786ին, առ Հ. Յարութիւն, Պոլիս:

աշխարհացոյցից յառաջանայ, միոյ մասին աշխարհի, այս է Եւրոպայիոյ աշխարհացոյցն է կատարեալէս աւարտեալ. Ափրիկոյ աշխարհացոյցն մերձ է ի կատարումն, իսկ Ամերիկոյ նորոգ սկսեալ փորագրել. Տէր զվատակաւոր պատուելի հարս մեր զօրացուցէ, զի ի գլուխ տարցին զայս մեծ եւ երեւելի գործա ի փառս իւր եւ ի պարծանս Միաբանութեանս մերոյ փոքու»⁴⁹:

Չորս քարտէսներու լուրը կը խանդավառէ Պոլսոյ մեր վարդապետները, որոնք արդէն օրինակներ ստացած էին իւրաքանչիւրէն, եւ երբ կ'ուշանան ղրկել վանքէն ծախու օրինակները՝ կը համնի բողբոջը. «գրէք թէ եղերեցաւ փորագրութիւն աշխարհացոյցից, ապա ընդէ՞ր ոչ առաքէք, Գերյարդելի. ես միշտ սպասեմ զի առաքես՞իք... վասն որոյ յիւրաքանչիւրոց առաքես՞իք յիսուն յիսուն. բայց լիցի ներկեալ»⁵⁰:

Մինչ այս՝ 1788ի Հոկտեմբերին չորս քարտէսներէն ալ կը տպագրուին քաւական օրինակներ, բայց զանոնք Պոլիս ղրկելէ առաջ՝ կը հարցուի հոն ստանուող Հայրերուն խորհուրդը, թէ ի՞նչ կերպով կադմուին. կ'առաջարկուին չորս կերպեր.

ա. Չորս քարտէսները կադմել միասին, իւրաքանչիւրը մէկական ծալքով, չքեղ կողքով.

բ. Իւրաքանչիւրը առանձին կպցնել կտաւի վրայ, վերէն ու վարէն հաստատել փայտէ ձողերու վրայ. ձողերու ծայրերը ոսկեգոյն մետաղէ գունտ մը.

գ. Իւրաքանչիւրը առանձին կպցնել լաթի վրայ, ու իբր շրջանակ դնել ժանեակ մը կամ գունաւոր լաթէ ժապաւէն մը.

դ. Ղրկել տպուած քարտէսները ինչպէս որ են, առանց որեւէ աշխատութեան:

1789 Ապրիլին քարտէսները դեռ չեն ղրկուած Պոլիս. հարիւրաւոր օրինակներ պէտք էին մի առ մի գունաւորուել, ինչպէս փափաք յայտնած էին Պոլիսէն⁵¹. Սեպտեմբեր ամսուն է որ ճամբայ կը դըրուին միայն տասնհինգ օրինակ, առ ի փորձ⁵², չորս քարտէսներու

49. Հ. Սահակ Պոսեան՝ Վենետիկէն, 4 Օգոստ. 1786ին, առ Հ. Յովսէփ Պաղտասարեան, Պաշալուով:

50. Հ. Յարութիւն՝ Պոլիսէն, 6 Հոկտ. 1788ին, առ Մելքոնեան Արքայ, Վենետիկ:

51. «Չաշխարհացոյց չորից մասանց աշխարհի ոչ ժամանեցաք առաքել սովին նաւու, մի՛ զի սպասէք ի ձէն՞ զիտել զեղանակ կազմութեան նոցա... որպէս ասէ թէ հարցեալ էր ի ձէն՞ նախորդ պաշտօնատէրն (Հ. Ստ. Աւրիկեան). եւ արկորդ՝ զի չեւ հա է վճարեալ ներկն, որպէս եւ պատուիրեալ էիք զամենայն ներկեալ առաքել» (Հ. Յովհաննէս Զօհրապեան՝ Վենետիկէն, 24 Ապրիլ 1789ին, առ Հ. Յարութիւն, Պոլիս):

52. «Առաքեմք երկու արկեղծ... ի միւս փոքր արկեղծ, նշանակեալ թուով 2, են աշխարհացոյցքն չորից մասանց, թփուղու, չէրչիւնով, համակ ներկեալ,

Հ. Յարուսթին Պոլիսէն գուցէ պատասխանած ըլլայ Հ. Եղիայի. սակայն Արքա՛օր ուղղած նամակին մէջ անուղղակիօրէն ուղեկով լուծել եղած թիւրիմացութիւնը, կը գրէ. «զայն փոքրիկ աշխարհացոյց, զոր քաղաք եւ մեծամեծ բաղձանօք խնդրեցին բաղումք եւ մանաւանդ Սեղառսեանք զի գիցի ի վերջն Օրացուցի, պատուիրելով պատուիրեսջիք զի արաքսեն փութով, եւ մի՛ համարիք զիրն փոքրիկ անպիտան, զի յոյժ յարգ ունի լինիլ աստ»⁵⁹, ու կը շարունակէ գրելով գովքը Օղապարիկ գիրքին, թէ 20 օրուան մէջ ծախուած են 600 օրինակ, եւ թէ 2000 օրինակ եւս պիտի տպառէր՝ եթէ տրամադրութեան ունենար:

Այս լուսաբանութիւններէն ու քաջալերական տողերէն ետք, Հ. Եղիա կը լծուի աշխատանքի. 1786 տարւոյն վերջաւորութեան դործը բաւական յառաջացած կը գտնենք⁶⁰, ու 1787ին, Ասիոյ եւ Ամերիկայի քարտէսներուն հետ (կամ ետքը) կը պատրաստէ 19,3 × 20 հրդ. մեծութեամբ նոր քարտէս մը, որու զարդանկարին վրայ գրուած է քարտէսին անունը «Լայնածաւալ Տէրութիւն Օսմանցոցն»:

1787 տարւոյն ամառը Օսմանեան տէրութեան քարտէսի տպագրութիւնը արդէն իսկ աւարտած ըլլալու է, ու 1789 տարւոյն Օրացոյցին հետ միասին կը կազմուի⁶¹. այսպէս կ'ընեն առ ի փորձ,

մեր, եւ գովութեան եւեթ առիթ): Սակայն ի վերայ այս ամենայնի լքաւ սիրտ իմ եւ դարձայ ի սենեակ իմ կորակոր, եւ գիտքիկ աշխարհացոյցն Տէրութեան Օսմանցոց, զոր սկսեալ էի եւ կիսով չափ յառաջեալ, ի բաց լքի տանով առ ազդէ այնպիսի, ոչ վամեցաւ զօրհնութիւն՝ հեռի եղիցի ի նմանէ, եւ թէ ըստ առակին Հէմ Բէլ Բն, հէմ ֆօտուլ: Բայց թէ տաս ինձ հրաման եղբայրական համարձակութեանս, խոնարհութեամբ եւ ոչ յանդգնութեամբ, սիրով եւ ոչ լուտանօք, ասացից. Դուք ոչ բարեւոք առնէք զի զոմանց նանրակողու հակառակորդաց զգրպարտ խօսս որպէս զբան ժողովրդեան ի գիր արձանացուցանէք եւ աստ առաքէք, որով զսիրտս լեռցանէք, եթէ՛ դործողաց եւ եթէ՛ հրամայողաց, եւ փակէք զդրունս զոր բանալ կամէաք այսպիսի գուարմալի իրօք, շահելով զսիրտս ժողովրդեան. փոխանակ զի պարտ էր յորդորական բանիւ զսիրտս եւ զձեռս զօրացուցանել զմեր. բայց գուցէ թէ գրեալ էք եւ մեր ոչ լուեալ. զայդ ոչ գիտեմ»:

59. Հ. Յարուսթին՝ Պոլիսէն, 25 Յունիւ. 1787ին, առ Մեղրոնեան Արքայ, Վենետիկ:

60. «Վասն փոքրիկ աշխարհացուցին, զոր խնդրեալ ես յաւելուլ ի վերջն Օրացուցին, զիտասջիք, զի պատրաստեալ ձեզ զայն, եւ սկսեալ եւս փորագրել, եւ ցուցանէ զբովանդակ երկիր տէրութեանն Օսմանցոց, որպէս ունիս տեսանել ի հասանել առ քեզ Օրացուցի 1789 թուին» (Հ. Ստ. Ասլիկեան՝ Վենետիկէն, 9 Դեկտ. 1786ին, առ Հ. Յարուսթին, Պոլիս):

61. «Վասն Օսմանցոց աշխարհացուցին ծանիր, զի 10 հատ առաքել ոչ լինի փոստով. ահա ընդ Օրացուցից տուաք կազմել խել մի, որք ցանկանն՝ զայն գնեսցեն, յետոյ տեսցուք գուցէ քանի մի հարիւր արձակ եւս առաքեսցուք» (Մեղրոնեան Արքայ՝ Վենետիկէն, 6 Սեպտ. 1787ին, առ Հ. Յարուսթին, Պոլիս): Քարտէսը չեն կազմեր 1788 տարւոյն Օրացոյցին հետ, որովհետեւ տարի մը առաջ տպագրուած եւ Պոլիս շրջաւորէին անոնք, ըստ սովորութեան:

գիտնալու համար Պոլսոյ արձագանքը, անոր համաձայն կառավարուելու համար: Մինչ այս, միակ օրինակ մը կը շրջուի Պոլիս. մեծապէս կը հաճի Հ. Յարուսթին եւ «յոյժ յարգի եղեւ որոց տեսինն»⁶², միաժամանակ սակայն կը սրտնեղի որ աւելի օրինակներ չեն շրջուած, ու կը յանձնարարէ որ փութով շրջուի իրեն գտնէ 2000 հատ⁶³, ու երկու ամիս ետք դարձեալ կը յիշեցնէ, աւելցնելով թէ «խնդրողքն ի պատրաստի են հատն զնել մինչեւ 20 փարայով եւ աւելի եւս, (մտածել որ մէկ Օրացոյցի գինն է երեք փարայ), միայն թէ ունիցին. եւ կարծեմ թէ այժմ ունէի ի ձեռին 500 հատ բովանդակն վաճառէի»⁶⁴: Հ. Յարուսթին թէեւ կը պնդէ եւ կ'ուղէ քարտէսները ունենալ նամակատան ճամբով, սակայն այս ձեւը հաշուի չէր գար, ուստի սովորական նաւու ճամբով կը շրջուին 2000 օրինակները⁶⁵, նշանակելով իւրաքանչիւրին իր գին՝ եօթը փարայ, իսկ Օրացոյցին հետ ըլլալու պարագային՝ 10 փարայ. ապա կը թողուն սակայն որ Պոլիս տեղւոյն վրայ կարենան յարմարցնել այս գինները՝ եթէ հարկ ըլլայ:

Հակառակ որ 2000 օրինակ նորատիպ քարտէսները Պոլիս կը հասնին 1788 տարւոյն սկզբնաւորութեան, սակայն ինչ որ կը տեսնուի՝ լաւ ընդունելութիւն չեն գտներ ժողովուրդին կողմէ. Օրացոյցներուն հետ կարուածներն անգամ արգելք կ'ըլլան Օրացոյցներուն վաճառուելուն, այնպէս որ կը ստիպուին մի առ մի անջատել եւ այնպէս ծախել Օրացոյցը⁶⁶. մանաւանդ որ առաջին թափը անցնելէ ետք՝ վաճառումը բնական կերպով կը դանդաղի ու գրեթէ կը կասի. «տեսէք Գերյարգելի, կը գրէ Հ. Յարուսթին Պոլիսէն 7 Փետր.

62. Հ. Յարուսթին՝ Պոլիսէն, 10 Հոկտ. 1787ին, առ Մեղրոնեան Արքայ, Վենետիկ:

63. Ամիս մը ետք, այն է 10 Հոկտ. 1787ին, Հ. Յարուսթին դարձեալ կը յիշեցնէ Արքա՛օր. «առաքեսջիք նաւու երկու հազար հատ. բայց որովհետեւ նաւն ոչ հասանի այս փութով, վասն որոյ ամէն փոստի դիք տասն տասն կամ հինգ հինգ եւ արկէք յանուն իմ ի փոստն, եւ զգին փոստին հանեմք առաւելօքն»:

64. Հ. Յարուսթին՝ Պոլիսէն, 10 Նոյեմբ. 1787ին, առ Մեղրոնեան Արքայ, Վենետիկ:

65. «Եւ աստի նաւ մի, յորում են երկու սնտուկ գրեանց եւ խնդրեալ աշխարհացոյցն երկու հազար. փոստով ոչ առաքեսցաք, զի մինչեւ հասանիցեն այդր, մինն մեզ լինի քսան փարայ» (Մեղրոնեան Արքայ՝ Վենետիկէն, 8 Դեկտ. 1787ին, առ Հ. Յարուսթին, Պոլիս): Նամակի մը մէջ (7 Նոյեմբ. 1787) Արքա՛սար խորհուրդ կու տայ Հ. Յարուսթինին՝ որ 2000 քարտէսները չյանձնեն միահաղոյն գրավաճառին, այլ մաս մը միայն, իսկ մնացածը ծախեն իրենք մաս առ մաս:

66. «Վասն փոքրիկ աշխարհացուցից, զորոց գրեալ էիք եթէ հանեալ յՕրացուցից առանձինն ունիք վաճառել, յուշ լիցի քեզ ծանուցանել մեզ եթէ հանի՞ք արդեօք որպէս եւ խորհեալ էիք եւ քանո՞յ վաճառեցիք զհասն, եւ եթէ պղինձն չիցէ ի սպառ մաշեալ, տացո՞ւք արդեօք տպել եւ զայլ, եւ զնոսա արձա՞կս առաքեսցուք՝ թէ կարեալ ընդ Օրացոյցս» (Հ. Ստ. Ասլիկեան՝ Վենետիկէն, 22 Յունիս 1788ին, առ Հ. Յարուսթին, Պոլիս):

1790ին, այն փոքրիկ աշխարհացոյցն, որ է Տէրութեան Օտմանցուց, որ եւ ունի զբաղում պալատութիւնս, մինչեւ ցայժմ մի եւ մի վաճառելով հարիւր զուգուշի վաճառեցաւ, եւ հետոս զհետէ եւս վաճառի, եւ այնպէս մեղ վնաս ոչ լինի, այլ շահ, եւ հասարակութեան անունն փառաւորի: Սակայն Հ. Յարութիւնի լաւատեսութիւնը բաւական չէր. Վենետիկէն կ'ուղէին աւելի զբաղական արդիւնքներ տեսնել՝ խանդավառութեամբ եւ նոր գործերու ձեռնարկելու համար:

* * *

Դանի մը տարուան ընթացքին վեց եւ աւելի քարտէսներու փորագրութիւնը կը խախտեն Հ. Նիլիայի արդէն իսկ փափուկ առողջութիւնը, այնպէս որ գործը աւարտելուն, Մելքոնեան Արքայալը կը գրէ. «Հ. Նիլիայն առաքեցի ի Փէթրոյ Վարատին, զի հաւայ փոխեցէ. զի յետ եղբերելոյ զփորագրութիւն աշխարհացոյցից, փոքր մի նեղսրտութիւն եկն նմա. եւ ինքն չէր յօժարեալ յայդոսիկ կողմանս (Պոլիս) գալ»⁶⁷: Դէպի Վարատին ճամբուն վրայ երբ կ'անցնի Թրիեստէն, հիւրը կ'ըլլայ Բասենցի Յարութիւն եպիսկոպոսի, որու «մատուցի զչորս մասունս աշխարհացոյցացն ի կողմանէ Ձերմէ (Արքայօրն), զորս եւ ընկալաւ սիրով»⁶⁸:

Վարատին հասնելէ ետք՝ առողջական վիճակը չի բարւոքիր. կ'ուղէ դառնալ Վենետիկ, շարունակել իր գործը. մինչ այդ՝ կ'ուղէ իմանալ թէ Վենետիկի մէջ «նոր ինչ փորագրութիւն ի մերոցս քաջաց լեա՞լ իցէ»⁶⁹: Այս ստուգելու գրելէն քանի մը օր ետք, այն է Յ Մարտ 1789ին կը վախճանի Հ. Նիլիայ, որ իր ճարտար մատներով բացած էր նոր ճամբայ մը, կամ աւելի ճիշտ դարադրութիւն մը հայկական քարտէսներու պատմութեան մէջ:

67. Մելքոնեան Արքայ՝ Վենետիկէն, 23 Օգոստ. 1788ին, առ Հ. Յարութիւն, Պոլիս:

68. Հ. Նիլիայ Էնտագեան՝ Թրիեստէն, 2 Օգոստ. 1788ին, առ Մելքոնեան Արքայ, Վենետիկ:

69. Հ. Նիլիայ Էնտագեան՝ Վարատինէն, 26 Յունուար 1789ին, առ Հ. Աւետիք Յարութիւնեան, Վենետիկ: Նոյն այս նամակէն կը մէջբերենք հատուած մը, ցոյց տալու Հ. Նիլիայի սէրն ու հետաքրքրութիւնը քարտէսներու հանդէպ. «Եւ եւս աղաչեմ յոյժ, զի յղեսիք զերկու մի ի փիանթան Վենետիկոյ, հանդերձ բոլոր լաւունայիւ, որ կայ ի յԱնգլիանդի Պիշինքի. մի ինչ տարակուսիք եթէ զիս՞րդ զատ ի բոլոր աղլանդէ կարեմք առնուլ. միայն յանձն առեալ զաշխարհութիւն ինքնին, կամ ի ձեռն Վ. Հ. Ներսէսի, զնացեալ առ որդին Ծերոյ Մաթթային, յանձն արաջիք նմա տալ տպագրել անտի մասնաւորապէս, որպէս արար միանգամ Վ. Հ. Ներսէսն վասն իմ զբաղակուսի համատարած աշխարհացոյցն, տալով տպագրել նորոգ, զոր եւ կատարեաց սիրով Մաթթայն. յուսամ թէ եւ զայս կատարեցէ սիրով»:

ԱՇԽԱՐՀԱՅՈՅՑ ՏԱԽՏԱԿ ՍԵԱԻ ԾՈՎՈՒ ԵՒ ՇՐՋԱԿԱՅԻՑՆ
ԱՇԽԱՐՀԱՅՈՅՑ ՏԱԽՏԱԿ ՆԵՂՈՒՑԻՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ
(տպ. Վենետիկ, 1791)

Տարիներու երազ մըն է որ կ'իրականանայ 1791ին, փորագրութեամբ երկու քարտէսներու, Սեւ Ծովու եւ Պոլսոյ Նեղուցին: 1751ին պատրաստուած էր Հայաստանի քարտէսը, եւ ապա տիրած երկար լուծիւն: Հ. Նիլիայ Էնտագեանի ստեղծած վերադարձութեան իսկ առաջ կար փափաքը վազելու այս լուծիւնը՝ հրապարակ հանելով այս զոյգ քարտէսները, սակայն պարագաներու բերումով ճիշտ այս երկուքը կը մնան ամէնէն վերջին իրագործելիները:

1772-1773 տարիներուն Հ. Ջաքարիան կը պտնենք Ս. Ղազար, ուր նուիրուած է աշխարհացոյցներու գործին. ծրագիր կը մշակէ պատրաստելու Ասլամ մը, որու մասին չունինք մանրամասն տեղեկութիւններ: Այս շրջանին կը ստանայ Պոլիսէն երկու քարտէսներ հետեւեալ նամակով. «Պառնսպի նաւաւ առաքեցի... Աթլանդն Հ. Յակոբոսի (Չամչեան) ... աշխարհացոյց մի ձեռագիր ի վերայ սանտալի, զոր պարզեւեաց Փափագեան Մկրտիչ աղայն, զոր չորս ոսկւով խնդրեցին ի ձեռաց նորա առնուլ, բայց մեղ պարզեւեաց վասն կատարման գործոյս մերոյ, ակն ունելով ի կատարել գործոյն առնուլ ի մէջ զմին յայնց: Է եւս ձեռագիր աշխարհացոյց մի Պոդազ իչիիմ, ի Չամչեան Անտոն աղայէ»⁷⁰:

Հ. Յակոբոս Չամչեանը եւս կը տեսնենք պատնէշի վրայ, իրագործելու համար հասարակաց ծրագիրը. բացայայտ կերպով կը գրէ իր եղբոր Հ. Միքայէլ Չամչեանի՝ թէ իր ազատ ժամերուն կը զբաղի քարտէսներով⁷¹, ու ինքն է անշուշտ որ Պոլիս իր Անտոն եղբորմէ կ'առնէ ձեռագիր քարտէսը ու կը զրկէ վանք⁷²: Նմանապէս Հ. Յա-

70. Հ. Մեսրոպ Աղաչրաղեան՝ Պոլիսէն, 3 Ապրիլ 1773ին, առ Հ. Ջաքարիա, Վենետիկ:

71. «Գլխաւոր գիրն իմ երկու է. մին վասն օրացուցին, երկրորդ վասն... աշխարհացոյցից» (Հ. Յակոբոս Չամչեան՝ Պոլիսէն, 19 Ապրիլ 1773ին, առ Հ. Մ. Չամչեան, Պատրա):

72. Չոյգ քարտէսները, Սեւ Ծովու եւ Պոլսոյ Նեղուցին, որոնք կը զրկուին Ս. Ղազար, յաջորդաբար տէրերը ետ կը խնդրեն: Հ. Յակոբոս Պոլիսէն կը գրէ Արքայօր (3 Նոյեմբ. 1774). «Անտոն եղբայրս ետ մեղ զաշխարհացոյցն Սեւ Ծովուն տաճիկեղբ գրեալ, եւ ետ ժամանակեայ, այսինքն օրինակեցուք եւ տպուք ինքեան. արդ այժմ խնդրէ ստիպմամբ. ուստի փութով օրինակեցէք եւ առաքեցէք»: Նոյն օրերուն Հ. Անանիա ճամպագեանն ալ Պոլիսէն Արքայօր կը գրէ (2 Նոյեմբ. 1774). «Երկու աշխարհացոյցը զոն առ ձեզ, մին Թղթեայ, որ է Չամչեանց Անտոն աղայի, եւ երկրորդն միտաքսեայ, որ է Փափագոյլու Մկրտիչ աղայի, զորս առ ժամանակ մի հայելոյ վասն առաքեցին այդր, եւ այժմ խնդրեն զնոսա տեսար իւրեանց. վասն որոյ մի՛ մոռասիք առաքել»:

կորոսի նամակէն կ'իմանանք թէ՛ զրոյս է Պոլսոյ Նեղուցին մէկ հին ձեռագիրը քարտէսը, օրինակած ու վրան դրած 67 թուանշաններ. նոյն նամակին մէջ օրինակած է 67 տեղադրական անունները (Ձըն-տան Քափուսու, Էյրի Քափու...), ու զրկած վանք⁷³:

1773ի դարնան տոնապահական պարագաներու բերումով՝ Հ. Ջաքարիա կը մեկնի Պոլիս. դործը թէեւ սկսած էր, կը մնայ կիսատ ու կը յաջորդէ խոր լռութիւն մը, մինչեւ որ 1784ին կը յայտնուի Հ. Եղիա, որու մասին անդրադարձանք վերեւ: 1790ին դրուած նամակէ մը⁷⁴ կ'իմանանք թէ Հ. Եղիա ծրագրի ունեցած էր Սեւ ծովու քարտէսն ալ փորագրել, սակայն Օսմանեան փոքրիկ քարտէսը ժողովուրդին կողմէ ակնկալուած ընդունելութիւնը չգտնելով՝ կը յուսալքուի ու կը թողու գործը, որու այնքան պատրաստուած էր հոգեպէս:

1789ին Պոլիսէն Հ. Յարութիւն դարձեալ կը վերադարձէ քարտէսներու հարցը, կը գրէ Աբրահամ, կը գրէ Հ. Ջաքարիային (Վենետիկ), որպէսզի իրագործուի տարիներու փափաքը, մանաւանդ որ «փառք է վանացս եւ գինն եւս ելանէ սակաւ առ սակաւ»⁷⁵: Երբ ընդունի Հ. Ջաքարիա, որ Մխիթար Աբրահամ քաջալերանքով ձեռք դարկած էր առաջին քարտէսներու փորագրութեան եւ կեանքի ընթացքին այնքան ծրագրերն էր մշակած էր, ներկայիս չի խանդավառուիր Հ. Յարութիւնի առաջարկով, այլ իրապաշտ կեդրով կը պատասխանէ անոր: Այդ նամակը ամբողջութեամբ կը մէջբերենք, քարտիսագրութեան պատմութեան համար կարեւոր համարելով.

«Ընկալայ զքարտիգիկ Հայրութեանդ գրեալն առ իս ի Մարտի (1789): Ընկալայ ընդ նմին եւ զաշխարհացոյցն Սեւ ծովուն չըրջակայ գաւառքն, զոր ներկեալ էր սիրելի եղբայրն իմ Վ. Տէր Ղուկաս Վրդ.ն (Օղուլլովեան) ըստ կարգի եւ յոյժ վայելչապէս ըստ իւրումն ճարտարամտութեան: Իսկ առ այն զոր գրեալ թէ տուփ փորագրել, ունիմ ասել բազում ինչ:

«Նախ, թէ իրաւի ոչ միայն դադար արժան է ածել ի լոյս, այլ թէ յաջորդէր, լաւ լինէր առնել Աթլագ մի բոլոր աշխարհիս:

Անտոն ազալի քարտէսը այս թուականներուն արդէն իսկ զրկուեր էր Պոլիս, իսկ Մկրտիչ Փափաղեանինը «ոչ դարձուցաք, զի որ առաքեալն գրեալ էր թէ վանիցն չնորհեալ է. բայց որովհետեւ այն խնդրի՝ դարձուցուք յետս, զի պիտանի եւս ոչ էր մեզ» (Մեղրոնեան Աբրայ.՝ Վենետիկէն, 21 Դեկտ. 1774ին, առ Հ. Անանիա, Պոլիս): 1775ի Մարտ ամսուն մէջ կը զրկեն քարտէսը Պոլիս:

73. Հմմտ. Հ. Յակոբոս Չամչեանի ընդարձակ նամակը, ուղղուած Հ. Ջաքարիայի (Վենետիկ), որ գրուած է 1 Ապրիլ 1773ին:

74. Հ. Ղուկաս Ինճիճեան՝ Վենետիկէն, 28 Հոկտ. 1790ին, առ Հ. Յարութիւն, Պոլիս: Այս նամակին մասին քիչ ետք պիտի անդրադառնանք, կատարելով մէջբերումներ:

75. Հ. Յարութիւն՝ Պոլիսէն, 7 Փետր. 1790ին, առ Մեղրոնեան Աբրայ, Վենետիկ:

«Երկրորդ, զիտեմ զի մինչեւ յայժմ լուեալ էք ի դրոյ Գերյ. Աբրահամ մերոյ, թէ փոխեցաւ առ Աստուած մեր Էնտաղեան Հ. Եղիա Վրդ.ն, եւ գիտէք զի սա էր, որ կարող էր եւ յօժարէր եւս փորագրել զայսպիսիս. եւ այժմ չիք նման նմա, եւ թէպէտ դոն որք կարող են ըստ ժամանակին լնուլ զտեղի նորա, բայց դեռ ի յուսման են:

«Երրորդ, զի ոչ միայն Գերյարդ. Աբրայահայրս ոչ ետ հրաման փորագրել այժմ զայդ, այլ եւ միաբանք տմենեքին ասեն թէ չէ ժամանակն դորա. բաւական է այն փոքրիկ աշխարհացոյցիկն բոլոր Տէրութեան Օսմանցոյ, որ եղաւ յՕրացոյցն ամին 1789: Եւ այս մինչեւ որ նաեւ բազումք ի մերս ազգէ (բայ ի նոցանէ որք կենակցին ընդ Փռանկս եւ զիտեն ընթեռնուլ զգիրս նոցա) տեղեկացին աշխարհագրութեան: Վասնզի եւ այս ձեր նկարեալ աշխարհացոյց փոքր է եւ զսակաւ զաւելի անուանս տեղեաց տեղեաց բովանդակէ քան զմիւսն:

«Զորրորդ, զի եթէ գիցի այն ի յՕրացոյցն, մեծ է, եւ Օրացոյցն ըստ թանձրութեանն լինի մին երկու, եւ լռէ բան Օրացոյցին: Իսկ եթէ արտաքոյ Օրացոյցին միայնակ վաճառեցի, սակաւք գնեն զայն, որպէս պատահեցաւ աշխարհացոյցիկի ամին 1789: Արդ եթէ յայնմանէ հազիւ երեսուն հատք վաճառեցան, ըստ քումդ գրելոյ, սպա եւ ի ամանէ առ առաւելն հազիւ յետուն կամ վաթսուն հատք վաճառին. եւ վասն այսչափ սակաւու աւելորդ են այժմ այնչափ աշխատանք:

«Արդ, զայսոսիկ գրելով, ոչ կամիմ ասել, թէ մի՛ նկարէք զՊոլիս զաղիչին եւ զիւրանթայն Ստամպուլու, զի այնք գիւրդն են, եւ կարեն նաեւ այժմ փորագրել. բայց նկարեցէք, աղաչեմ, ի փոքրիկ զիրս ըստ չափու մեծութեան փոքրիկ աշխարհացոյցի ամին 1789: Ի գրաւ ասեմ եւ զայս, մի՛ զանց առնէք եթէ կամիք աշխատիլ ի նրկարս աշխարհագրական պատկերաց. վասնզի եւ այնք ըստ ժամանակին պիտոյ են մեզ»⁷⁶:

Հ. Ջաքարիայի բոլոր այս պատճառաբանութիւնները համոզիչ չեն թուիր Հ. Յարութիւնի, որ յաջորդաբար դարձեալ կը պնդէ, խոտաւանալով վճարել բոլոր ծախսերը⁷⁷: 1786-1790ական թուական-

76. Հ. Ջաքարիա՝ Վենետիկէն, 23 Ապրիլ 1789ին, առ Հ. Յարութիւն Պոլիս: Հ. Ջաքարիայի ակնարկը 1787ի Օսմանեան տէրութեան քարտէսին մասին, որ կադմուած է 1789ի Օրացոյցին հետ, վերապահով քարտէսին թուական կը համարի սա: 1789ին ոչ մէկ քարտէս փորագրուած է:

77. «Սեւ ծովու աշխարհացոյցին դայս ասեմ. տուք փորագրել փութով, եւ որչափ ինչ ծախ լինի՝ գրեմք զառ իս. աս ի մէջ փոքր ժամանակի կրկին գինն հանից անտի եւ առաքելոյ ձեզ. բայց ասացի փութով, եւ ոչ թէ սկսիլ եւ մոռանալ» (Հ. Յարութիւն՝ Պոլիսէն, 22 Ապրիլ 1790ին, առ Մեղրոնեան Աբրայ, Վենետիկ):

ներուն Հ. Ղուկաս Ինճիճեան Պոլիս է, ուր դացած էր կատարելա-
գործելու տեղագրական աշխատութիւնները, յատկապէս Օսմանեան
պետութեանը. ինքն ալ գաղափարակից Հ. Յարութիւնի՝ կը փափա-
քէր քարտէսներու ծաւալումը: 1790ի Հոկտեմբերին երբ կը դառնայ
Վենետիկ, կը տեղեկացնէ Հ. Յարութիւնի՝ գրելով թէ վանական-
ները խանդավառ են քարտէսներով, մանաւանդ թէ ծրագրած են այդ
օրերուն իսկ փորագրել տալ ժամանակակից պատերազմներու քար-
տէսները ու ղրկել Պոլիս, սակայն լսած ըլլալով Հ. Յարութիւնի
նամակներէն թէ Օսմանեան տէրութեան փոքրիկ քարտէսը ընդու-
նելութիւն չէ գտած ժողովուրդէն, կասած են նոր գործի ձեռնար-
կելէ⁷⁸:

Այնուհետեւ Ինճիճեան անձնապէս կը նուիրուի այս գործին. եւ
որովհետեւ հարցը գաղափարներ յղանալու մասին չէր, բան մը որ
ամէն սրտի մօտիկ էր, այլ տնտեսականի, Հ. Ղուկաս կը մտածէ
դրամագլուխ մը հաստատել, որու եկամուտով ծաւալին քարտէս-
ները. կ'ողէ նաեւ որ տպագրութիւնը բաղմանատու աշխարհագրու-
թիւնը զարգարուի նկարներով: Այս նպատակով կը գրէ Պոլիս, ի-
մանալու համար թէ ցարդ Պոլիս ծախուած քարտէսներէ ինչ դու-
մար ձեւացած է, խնդրելով որ այդ գումարը ամբողջութեամբ յանձ-
նուի իրեն⁷⁹:

Մինչ այդ, մինչեւ որ պատասխան մը ընդունէր Պոլիսէն, Ալեա-
սանտրի անունով խտալացի փորագրիչի մը կը յանձնէ տպագրելի

78. «Եկեացողք ի խօսս աշխարհագրութեան. աստ (ի Վենետիկ) բաղում հալէս դոյ
ի փորագրել զաշխարհացոյցս, մինչեւ ի մտի եղեալ են նախ քան զգլին իմ
աստ, փորագրել զայժմեան պատերազմի աշխարհացոյցն հայերէն եւ առաքել
ի Կոստանդնուպօլիս: Իսկ ի հարցանելն իմ մերոց, թէ ընդէ՞ր ապա կ'ստեալ
կայք եւ ոչ փորագրէք գէթ զաշխարհացոյց Սեաւ ծովուն. պատասխանի ետուն
միաբերան թէ Հ. Յարութիւն գրեալ է վասն այն փոքրիկ աշխարհացոյցի Օս-
մանեան սահմանացն, զոր փորագրեաց Հ. Եղիայն, ժողովուրդն ասին թէ փոքր
է, եւ ոչ յարմար ի գործածութիւն. որով կամի առել Հ. Յարութիւնն թէ ժո-
ղովուրդը ոչ հաւանեցան եւ ոչ վաճառի: Յայն սակա եւ Հ. Եղիայն զգուեալ
ելիք զսիրտ իւր, եւ ոչ փորագրեաց զՍեաւ ծովն, առ որ պատրաստեալ էր:
Ես յայնժամ սկսայ մեկնել զբան Վերապատուելութեանդ եւ յորդորեցի փոյթ
տանել առ այս. Թերեւս գտցողք զոմն զոր միշտ պարապեցուցողք յայս գործ».
(Հ. Ղուկաս՝ Վենետիկէն, 28 Հոկտ. 1790ին, առ Հ. Յարութիւն, Պոլիս):

79. «Առաքեսցիք նաեւ զդրամս աշխարհացոյցից, թէ ի չորից մեծամեծացն եւ թէ
ի փոքր աշխարհացոյցէն Օսմանցոյն տէրութեան. եւ յառաքելն զփոլիցա,
նոյնպէս որոշեալիք թէ ի յառաքեալ դրամս փոլիցային այսպիսի ինչ դրամ են
չահեալքն յաշխարհացոյցից. զայս դրամ, սիրելի իմ, փութով որչափ ինչ հնար
է առաքեսցիք, որպէսզի նովին դրամովք զայլ աշխարհացոյցս եւս փորագրել
տացուք» (Հ. Ղուկաս՝ Վենետիկէն, 30 Նոյեմբ. 1790ին, առ Հ. Յարութիւն
Պոլիս):

աշխարհագրութեան գիրքէ մը քանի մը պատկեր, որպէսզի վարժի
պղինձի վրայ փորագրել հայկական գիրերը. «առ ի փորձ նախ փո-
րագրել տուաք զայն պատկեր, յորում ի ստուերէն աշխարհի ապա-
յուցանի ձեւ աշխարհի... այժմ փորագրել տամք զպատկեր դրից
բնակչաց աշխարհի, այլ եւ գիականութից նօսր գրովք, առ ի փորձել
եւ ղնօտր գիր նորա»⁸⁰:


1791ի Մարտին արդէն իսկ տպագրուած են զոյգ քարտէսները,
Պոլսոյ Նեղուցին եւ Սեւ ծովուն. քայքայ թէ ո'րքան յոգնութեան եւ
աշխատանքի դուռ բացած է այս գործը Ինճիճեանին, միայն ինքը
կարող է նկարագրել⁸¹: Քարտէսներու ձեւագիրը գծագրութիւնը պա-
տրաստած ու վանք ղրկած է պոլսաբնակ Տէր Ղուկաս Օղուլլուխ-
եան (որ ապա կ'անդամակցի Միաբանութեանս): Երկու քարտէս-
ներն ալ ունին նոյն մեծութիւնը, դեղեցիկ զարդանկարներով եւ
անուանացոյցով:

Շատ մեծ յոգնութիւններով ձեռք ձգուած այս քարտէսները
խայծը պիտի ըլլային յաջորդ նորանոր փորագրութիւններու. այս
էր ծրագիրը Ինճիճեանի, որ իր գաղափարը իրագործելու համար
կը մտածէ զանազան հնարքներ: Այսպէս քարտէսներու փորագրու-
թեան ընթացքին, երբ պղինձներու վրայ փորագրուած են միայն
սահմանները, առանց անուններու, քաւական մեծ թիւով մը տպել
կու տայ անոնցմէ, որպէսզի Պոլիս ղրկելով՝ հոն տեղւոյն վրայ յա-
տուկ դրագիրներու ձեւերով գրուին տաճկական անունները ու այն-
պէս ծախուին, որպէսզի քարտէսը ծաւալի տաճկական խաւերէն
ներս ալ, եկամուտի նոր աղբիւր մը ստեղծելու նպատակով: Նոյն
հնարքը կը մտածէ ընել յունարէն լեզուով՝ յոյներու համար: Անգիր
քարտէսներէն մաս մը գաւառներու համաձայն գունաւորել տալով
կը ղրկէ Պոլիս, աւելի ձգել զարձնելու նպատակով. եւ կամ նոյն
ատենուան սովորութեան համաձայն՝ մաս մը տպել կու տայ տպի-
տակ մետաքսի վրայ, դրամապանակի մէջ պահելու դիւրութիւն ըն-
ծայելու համար. ու վերջապէս կը մտածէ նոյնիսկ զանոնք ծաւա-
լելու կերպին մասին⁸²:

80. Հ. Ղուկաս՝ Վենետիկէն, 19 Նոյեմբ. 1790ին, առ Հ. Ստ. Ազոնց, Պաշպալով:

81. «Այլ թէ զինչ ինչ կրեալ եմ ես վասն այսոցիկ երկուց աշխարհացոյցից, նախ
վասն համոզելոյ զմերսն ի սկսանիլ զփորագրութիւնն. երկրորդ, ի գտանել
զոմն ի փորագրողաց կարող այսմ (քանզի ի մերոց չիք ոք փորագրող). երրորդ,
ի յուսուցանել փորագրող առն ղեղանակս եւ զկանոնս հայկական գրոց. եւ
չորրորդ, առ ի առնուլ զդրամս ի վճարումն ծախուց. թէ զինչ ինչ կրեալ է
իմ վասն այսոցիկ, Տէր միայն գիտէ. յիւրաքանչիւր նուազս յորժամ գնայի
առ ի առնուլ զդրամս վասն ծախուց, ի մահ քրտէի սակա մեծի տառապա-
նացս» (Հ. Ղուկաս՝ Վենետիկէն, 6 Մարտ 1791ին, առ Հ. Յարութիւն, Պոլիս):

82. 6 Մարտ 1791 թուարկիւր նամակով, Հ. Ղուկաս Ինճիճեան կը թելադրէ Հ.
Յարութիւնի, մէկտեղել քարտէս նուիրել ժամանակին Պոլսոյ զանազան երե-



ներ կ'առաջարկէ «Նեղուց»ի մասին, որու համար ինձիճեան կը սրտնեղի, որովհետեւ այլեւս անհնար էր սրբազրուութիւնները անցընել քարտէսին վրայ⁸⁶: Յաջորդաբար ինքը Հ. Ինձիճեան կը գտնէ զանազան թերութիւններ նոյն քարտէսին վրայ, որոնք նամակով մը կը հաղորդէ Պոլիս՝ Հ. Յարութիւնի, որպէսզի կարելիին չափ սըրբազրուած հրապարակ հանուին⁸⁷:

Հ. Ինձիճեան իր բոլոր ակնկալութիւններուն հակառակ՝ կը տեսնէ որ քարտէսները մեծ ընդունելութիւն մը չեն գտներ Պոլսոյ մէջ, որու հետեւանքով չեն ալ փորագրուիր նորերը. քայքայ որպէսզի գտնէ եղած փորագրութիւններու ծախսը հանեն, կը մտածէ Սեւ ծովու քարտէսը տեղաւորել 1794 տարւոյն Օրացոյցին մէջ, ինչ որ

86. «Եհաս ի ձեռս իմ Նեղուցն Կոստանդինուպօլսոյ սրբազրեալ ի Ղուկաս Վրդ.է (Օղուլլուխեան): Բազում սրբազրութիւնք են, որք. յօրինակին այնպէս էին. ուստի պարտ է Ղուկաս Վրդ.ին կատարեալ յօրինել զօրինակն, զի մի՛ յետոյ լիցի սրբազրութիւնն. նոյնպէս եւ զգիրն բարեւոք պարտ է գրել, զի մի՛ յօրինող փրանկն եւ եւս վատթար գրեսցէ: Ուստի ոչ կարեմք զամենայն սրբազրութիւնսն ի նորոյ փորագրել տալ, զի եղծանել եւ բառնալ զառաջին փորագրեալսն ի պղնձի՝ է դժուարին» (Հ. Ղուկաս Ինձիճեան՝ Վենետիկէն, 16 Յուլիս 1971ին, առ Հ. Յարութիւն, Պոլիս):

87. «Յուսամ թէ ընդ հասանել գրոյս ի ձեռս վերապատուութեանդ, հասանի եւ աշխարհացոյց Նեղուցին Կոստանդինուպօլսոյ, ուր քանզի ի մոռանալոյ մնացեալ են բառք առանց փորագրութեան եւ սպրդեալ են սխալք ինչ, յայն սակս սրբազրեալ ի վերայ պատկերին, եղի զայն տեղի պատկերին յայս թուղթ, որպէսզի հայելով ի նա սրբազրել տալիք ումեմն ձեռագիր գրով, եւ այնպէս ի վաճառ հանջիք: Սխալքն են, զի շուրջ Կոստանդինուպօլիս քաղաքաւ ոչ են եղեալ տառքս Բ. Գ. Դ. Ե. Զ. Է. Ը. Թ. Ժ. Ի. Կ. Լ. Խ. որ է նշան տալեանի առաջի օէրային, եւ բառս Սէրայ պու.: Ձայս ամենայն ի վերայ օրինակիս եղաք ձեռագիր, որպէս գտանէք ի քաղաքս ընդ տպագրելոյն: Եւ եւս տառս Բ. ոչ գոյ ի տպագրեալն. Ժ մերձ է յոյժ ի տառն Ի. տառ Ը ոչ գոյ, այլ փոխանակ նորա եղեալ կայ Ծ, որով լինի կրկին Ծ: Տառս Թ եղեալ կայ մերձ յոյժ ի Ծովեղն: Ձայս ամենայն ի փոքրիկ օրինակիս զոր եղի ի թղթիս, տեսանէք գրեալ եւ սրբազրեալ, ըստ այսմ եւ դուք զտղիք զումն գի յօրինակս յայս հայելով ճշդիւ սրբազրեսցէ...: Տեսանողք աշխարհացոյցիս աղեցին ինձ եւ այլ իմն սխալ, որ քանզի նաեւ յօրինակին անդ նկարեալ ի Ղուկաս Վրդ.էն էր այնպէս, յայն սակս ոչ մերձեցաք: Եւ սխալն է այս, այսինքն զի տառս Ը, որ է ի մէջ թուոցն 23 եւ 24, պարտ է գնել, ասացին, ի մէջ 22 եւ 23 թուոցն, զի Գաբա Կեօմբիւք, զոր ցուցանէ տառս Ը, է ասեն, ի մէջ Էտրեմէ եւ Թօփ Գաբուիմ, զոր ցուցանեն թիւքս 22 եւ 23: Եթէ յիրաւի այսպէս պարտ է գնել, ազդ արաւիք, զի սըրբազրեսցուք աստէն: Այլ տմն նշանակեաց զայլ իմն սխալ, որ ըստ կարծեաց նորա միայն է սխալ. այսինքն թէ չիք ի Խասգեղ բնակութիւն հայոց, եւ ոչ եկեղեցի. այլ այն բնակութիւնք եւ եկեղեցի են ի Փիրիքաշամ, եւ ոչ ի Խասգեղ են բնակութիւնք հայոց եւ եկեղեցի. բայց զայս նշանակեցի, զի թէ այսպէս ինչ գտցի, ինձ ծանուցիք» (Հ. Ղուկաս՝ Վենետիկէն, 15 Յուլիս 1791ին, առ Հ. Յարութիւն, Պոլիս):

ՅՈՒՑԱԿ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԱԾ ՔԱՐՏԷՍՆԵՐՈՒ

1. ՀԱՄԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ, 1695

- Տեղի՝ *Ամսդերտամ*.
- Փոքագրող՝ *Ադրիանոս և Պետրոս Սքոոնեբեկ եղբայրներ*.
- Տարի՝ 1695.
- Մեծութիւն՝ 120×150 հրդ.
- Անուանացոյց՝ «Նորոգ քանդակ գեղեցկավէպ հանրանշան, Փոխաբերեաց Թօմա յետնորդ ոստ վանանդեան:

Փորագրութիւն յոյժ ցանկալի,
ի ձեռն եղբարց հարազատի,
Ադրիանու Ըսկօնքէկի,
և Պետրոսի քաջավարժի.
Ընդ Ղուկասու հրմտագունի,
Երկամբք քաղմօք յայտ ածողի,
Եղբօր որդի իմ անդրանկի,
Պահեսցէ ին յիւրում ծոցի:

ՅԱմատէրդամ,
1695:

Hadrianus et Petrus,
Damianus Schoonebeek,
Fratres faciebant,
Amstelodami,
MDCXCV».

2. ԵՐԿԻՐ ԱԻԵՏԵԱՑ, 1746

- Տեղի՝ *Վենետիկ*.
- Փոքագրող՝ *Հ. Իգնատիոս Խաչատուրեան*.
- Տարի՝ 1746.
- Մեծութիւն՝ $37,6 \times 47,9$ հրդ.

- Անուանացոյց՝ *Երկիր Աւետեաց*.
Որ և ասի Երկիր Քանանացւոց. և Երկիր Ի(սրայ)էլի.
Բաժանեալ յերկոտասան վիճակս ըստ Թուոյ
Երկոտասան ցեղից Ի(սրայ)էլի:
Առ նմին եղաւ ի փոքրիկ գիրա և Երկիրն Եգիպտոսի. և ասպառաժն Արարիա, ուր եղեւ չու, և խր բանակետդ որդւոցն Ի(սրայ)էլի:
Փորագրեալ յամի Տ(եառ)ն
1746»:

3. ՀԱՄԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ, 1747

- Տեղի՝ *Վենետիկ*.
- Փոքագրող՝ *Հ. Իգնատիոս Խաչատուրեան*.
- Տարի՝ 1747.
- Մեծութիւն՝ $23,4 \times 38,8$ հրդ.
- Անուանացոյց՝ «Համատարած աշխարհացոյց»:

4. ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑՑ, 1751

- Տեղի՝ *Վենետիկ*.
- Փոքագրող՝ *Giuseppe Zucchi*.
- Տարի՝ 1751.
- Մեծութիւն՝ $37 \times 50,4$ հրդ.
- Անուանացոյց՝ «Աշխարհացոյց Հայաստան հայց».
Ըստ հին և նոր աշխարհագրաց:
Փորագրեալ ի Վէնէտիկ.
Թամի Տ(եառ)ն 1751.
Ի Թուին Հայոց ՌՄ»:

5. ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑՑ, 1778

- Տեղի՝ *Վենետիկ*.
- Փոքագրող՝ *անյայտ*.
- Տարի՝ 1778.

- Մեծուքիւն՝ 83×83 հրդմ.
- Անուանացոյց՝ «Աշխարհացոյց Հայաստանեայց :
Փորագրեալ արդեամբք՝ աղայ Շամիրի,
Մեծի Շամիրեանց՝ տանըն պանծալի.
Առ ի յիշատակ՝ իւրում անդրանկի,
Յակորոս անուն՝ որդւոյն նազենի :
Որ ի մանկական՝ ծաղկեալ հասակի,
Վախճանեալ փոխի՝ հնդկաց աշխարհի,
Թողեալ կաթողին՝ զիւրան ըզկնի,
Աշակերտութ(եամ)բ պրոց սոփեստի :
Ի Վէնէտիկ. 1778: Ի թուին Հայոց ՌՄԻԷ»:

6. ՀԱՄԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ, 1784

- Տեղի՝ Վենետիկ.
- Փորագրող՝ Հ. Եղիա Էնտաղեան.
- Տարի՝ 1784.
- Մեծուքիւն՝ 29×43 հրդմ.
- Անուանացոյց՝ «Համատարած
Աշխարհա
ցոյց
Քառակուսի.
Փորագրեալ ի վանս ս(ր)բ(ո)յն Ղազարու.
1784»:

7. ԵԻՐՈՊԱ, 1786

- Տեղի՝ Վենետիկ.
- Փորագրող՝ Հ. Եղիա Էնտաղեան.
- Տարի՝ 1786.
- Մեծուքիւն՝ 43×64 հրդմ.
- Անուանացոյց՝ «Եւրոպիա
Ըստ նոր
Աշխարհագրական զննութեանց.
Փորագրեալ
Ի Վէնէտիկ,
Ի վանս սրբոյն Ղազարու.
Ի թուիս մերում
ՌՄԼԵ - 1786»:

8. ԱՓՐԻԿԷ, 1786

- Տեղի՝ Վենետիկ.
- Փորագրող՝ Հ. Եղիա Էնտաղեան.
- Տարի՝ 1786.
- Մեծուքիւն՝ $47 \times 63,3$ հրդմ.
- Անուանացոյց՝ «Ափրիկէ
Ըստ նոր
Աշխարհագրական զննութեանց.
Փորագրեալ
Ի Վէնէտիկ,
Ի վանս սրբոյն Ղազարու.
Ի թուիս մերում
ՌՄԼԵ
1786»:

9. ԱՄԵՐԻԿԱ, 1787

- Տեղի՝ Վենետիկ.
- Փորագրող՝ Հ. Եղիա Էնտաղեան.
- Տարի՝ 1787.
- Մեծուքիւն՝ $46 \times 62,4$ հրդմ.
- Անուանացոյց՝ «Ամերիկա
Ըստ նոր
Աշխարհագրական զննութեանց.
Փորագրեալ
Ի Վէնէտիկ,
Ի վանս սրբոյն Ղազարու.
Ի թուիս մերում
ՌՄԼԶ
1787»:

10. ԱՍԻԱ, 1787

- Տեղի՝ Վենետիկ.
- Փորագրող՝ Հ. Եղիա Էնտաղեան.
- Տարի՝ 1787.
- Մեծուքիւն՝ $46,2 \times 63,8$ հրդմ.
- Անուանացոյց՝ «Ասիա
Ըստ նոր

Աշխարհագրական գննութեանց .
 Փորագրեալ
 Ի վէնէտիկ ,
 Ի վանս սրբոյն Ղազարու .
 Ի թուրս մերոմ
 ՌՄԼԶ
 1787» :

11. ԼԱՅՆԱԾԱԻԱԼ ՏԵՐՈՒԹԻՒՆ ՕՍՄԱՆՑԻՈՑ, 1787

- Տեղի՝ Վենետիկ .
- Փորագրող՝ Հ. Եղիա Էնտագեան .
- Տարի՝ 1787 .
- Մեծութիւն՝ $19,3 \times 20,8$ հրդ .
- Անուանացոյց՝ «Լայնածաւալ
 Տ(է)րութի(ւն)
 Օսմանցւոցն
 որ
 յԱսիայ, յԵւրոպիայ
 եւ յԱֆրիկայ :
 Փորագւ(րեալ) Ի Վենետիկ ,
 Ի վանս տ(ր)ք(ո)յն Ղազարու .
 1787» :

12. ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ ՕՍՄԱՆԵԱՆ ՏԵՐՈՒԹԵԱՆ, 1791

- Տեղի՝ Վենետիկ .
- Փորագրող՝ Alessandri .
- Տարի՝ 1791 .
- Մեծութիւն՝ $23,9 \times 41$ հրդ .
- Անուանացոյց՝ «Աշխարհացոյց
 Օսմանեան տ(է)րու(թ)ե(ան) որ Ի յԵւրոպայ .
 Այլ եւ փոքր թաթարաց . մասին Անատոլիոյ ,
 Մաճառաստանայ, մասին Լեհաց եւ մասին
 Մօսկօֆաց .
 Փորագրեալ Ի Վենետիկ ,
 Ի թուականիս ՌՄՊ : 1791» :





13. ՆԵՂՈՒՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՑ, 1791

- Տեղի՝ Վենետիկ.
- Փոքագրող՝ Alessandri.
- Տարի՝ 1791.
- Մեծուքիւն՝ $23 \times 40,8$ չրդմ.
- Անուանացոյց՝ «Նեղուց
Կոստանդնուպօլսոյ.
այն է
Պողազ իջի:
ի նախնութն
Վասիլորոն Թրակիոյ:
ի Վենետիկ
ՌՄԽ. 1791»:

Résumé

L'ÉCHO DANS LES ARCHIVES DE ST. LAZARE
DES CARTES GÉOGRAPHIQUES ARMÉNIENNES
DU XVII^e-XVIII^e SIÈCLE
(P. SAHAK DJEMDJEMIAN)

Une étude détaillée, basée sur les documents inédits des archives du monastère des Pères Mekhitaristes de St. Lazare à Venise, de la remarquable production arménienne de cartes géographiques vers la fin du XVII^e et tout le long du XVIII^e siècle. Etude portant sur la réalisation graphique, technique, sur l'entreprise et les implications économiques. Ces cartes, le plus souvent, sont au niveau des plus récents progrès dans l'art d'impression et dans la connaissance du monde de l'époque.

L'étude progresse selon un ordre chronologique et la première considération porte sur la «Carte mondiale» (*Hamatarac ašxarhac'oyc'*), éditée par T'omas Vanandec'i à Amsterdam en 1695. Cette carte, d'une valeur exceptionnelle, ornait déjà du vivant du fondateur Mxit'ar la salle de réception du monastère. Suit une description minutieuse des péripéties qui ont permis au P. Zak'aria Alek'sanean d'acquérir à Constantinople au prix de 220 livres d'or les huit grosses matrices en cuivre de cette édition. Une deuxième édition sera faite à Venise sur ces mêmes matrices en 1754. Cependant, la première carte dont les matrices furent gravées à Venise dès 1746 est celle de la «Terre promise» (*Erkir awe-teac'*); elle reste toutefois inédite jusqu'en 1769 lorsqu'elle sera insérée dans l'édition posthume du deuxième volume du dictionnaire *Haykazean* de Mxit'ar. En 1747 seront réalisées les matrices d'une petite carte mondiale (*Hamatarac ašxarhac'oyc'*) qui est publiée dans le premier volume du même *Haykazean* (1749). Deux autres cartes représentant les courses des planètes ornent encore ce volume; elles furent très probablement gravées par le P. Zak'aria qui s'était, entre-temps, transféré à St. Lazare, et dont la figure domine cette première période de la production cartographique des Mekhitaristes.

La première carte d'Arménie (*Ašxarhac'oyc' Hayastaneayc' ast hin ew nor ašxarhagrac'*) fut imprimée en 1751, gravée par Giuseppe Zucchi; celle-ci aussi restera inconnue jusqu'à la parution du deuxième volume de *Haykazean* où elle sera publiée. Une autre carte d'Arménie sera imprimée à Venise en 1778. Il ne s'agit pas cependant d'une édition mekhitariste ayant été commandée à un certain A'arak'el par un mécénate de l'Inde, Šamir, peu sympathisant envers les Mekhitaristes. Il semble malgré tout que ces derniers aient eu une certaine part dans la préparation de cette carte, car ils en possédaient, en 1786, cinquante exemplaires lorsque A'arak'el était encore en vie.

L'A. examine ensuite les circonstances concrètes dans lesquelles certains membres de la Congrégation s'adonnèrent à cette activité cartographique. Le vieillissement des cadres avait même conduit à une période d'arrêt dans cette activité particulière jusqu'à l'apparition du P. E'lia Entazeian, lequel doué d'un vrai talent de graveur, domine la deuxième phase de la cartographie mekhitariste. Il se révélera en 1784 avec la gravure d'une carte mondiale, un petit chef-d'œuvre du genre. L'A. suppose que la carte publiée la même année à la fin du premier volume de *l'Histoire des Arméniens* du P. Mik'ayel Č'amč'ean est une des premières expériences du même graveur, antérieure à la carte mondiale. Celle-ci, restera cependant, ignorée, selon une coutume à la quelle nous sommes habitués, comme on avait voulu réserver sa publication à la *Géographie* que le P. Step'anos Akonc' préparait et qui ne verra le jour qu'en 1817. Le P. E'lia gravera par la suite les cartes des quatre continents (Europe et Afrique en 1786, Amérique et Asie en 1787). Son dernier travail sera la carte de l'empire ottoman (*Laynatarac Tērut'iwn Osmanc'oc'n*) gravée en 1787. De constitution délicate, affaibli par l'excès de travail, le P. E'lia mourra le 5 Mars 1789 en Transylvanie, où il avait été envoyé par les Supérieurs pour se reposer.

Les deux dernières cartes prises en considérations furent gravées et publiées en 1791. La première est une carte du Pont Euxin et des environs (*Ašxarhac'oyc' taxtak Seaw Covu ew šrjakayic'n*), la deuxième, celle du Bosphore (*Ašxarhac'oyc' taxtak Ne'tuc'in Kostandnupólsoy*). Les principaux promoteurs de cette dernière initiative de la cartographie arméno-vénitienne du XVIII^e siècle furent les Pères Yakobos Č'amč'ean et Łukas Inčič'ean. Ces cartes ne rencontrent pas cependant le succès attendu. C'est le crépuscule d'une longue histoire de fervente activité qui devait reprendre au cours du siècle suivant avec une nouvelle vigueur.